

Գրական Թերթ

ISSN 1829- 1627

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ * ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1932-ԻՑ * ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՍ

Տղա գրվում է ՀՀ Մեակույթի նախարարության աջակցությամբ www.grakantert.am

ՔՈՎԻԴ - ՔՐՈՆԻԿՈՆ

Մարտի 13, ուրբաթ

Այսպիսի օրով նորմալ մարդը նորմալ իրավիճակում, եթե հնար ունենա, տանը կմնա՝ շառից-փորձանքից հեռու: Իսկ մենք՝ «Արտավագր» մրցանակաբաշխության ժյուրիի անդամներս, միահամուռ ու միակամ հավաքվել ենք Գ. Սունդուկյանի անվան թատրոնի նախասրահում՝ լուսավորված անց դիտելու «Թռիչք կկվի բնի վրայով» ներկայացումը: Չգիտեմ՝ ինչ են զգում գործընկերներս, բայց ես երկու իրարամերժ զգացումների միջև ինձ պատեպատ եմ տալիս.

1. Ի՞նչ լավ է՝ հանդիսատեսը գալիս է ու գալիս, դահլիճում հաստատ անշլագ է...

2. Ի՞նչ սարսափ է, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը մարտի 11-ին հայտարարեց, որ նոր կորոնավիրուսի տարածումը հասել է պանդեմիայի փուլին: Հայաստանում կորոնավիրուսի առաջին դեպքի մասին հայտնի էր դեռևս մարտի 1-ին, իսկ հանդիսատեսը գալիս ու գալիս է, դահլիճում էլ հաստատ անշլագ կլինի...

Տարիներ էլ անցնեն, մոռանալու չէ, թե ինչպես էի համադրում բեմում ծավալվող դրամատիկական տեսարանին անկեղծ ապրումակցելու նույնքան անկեղծ սարսափիս հետ, երբ դահլիճում ինչ-որ մեկը հագում էր կամ փռչում...

Մարտի 14, շաբաթ

Երեկոյան «Մետրո» թատրոնում ժյուրիի անդամներով դիտելու ենք «Սև կատուն»: Եվ որքան էլ գայթակղիչ է ներկայացումը՝ ներկայացված անվանակարգերով, ժամը 11-ին, ինձ համար էլ անսպասելի մտմտում եմ՝ «Գնա՛, թե՛ չգնա՛», բայց, ի վերջո, որոշում եմ զնալ: Իսկ երբ քիչ անց զանգում է մեր հնայիչ համակարգողը՝ Ռուզիկը, ինձ համար էլ անսպասելի ու չոր հայտարարում եմ, որ թատրոն չեմ գա, ու եթե դեռ բանակառությունը գործում է, պատկան մարմինները պիտի՝ դադարեցնեն բոլոր մարդաշատ միջոցառումները... Կարճ դադարից հետո (խեղճ աղջկան ժամանակ էր պետք իմ չպատճառաբանված մարտական հարձակումից ուշքի գալու համար) նա ներողություն է խնդրում (թե ինչի՞) և փութկոտ անջատում է հեռախոսը: Իսկ ես... ես մնում եմ վստահված գործի հանդեպ պատասխանատվության ու տարրական ինքնապաշտպանական բնագոյի սահմանագրին, մի որոշ ժամանակ ինքնակերթության բարձրագույն պիլոտաժ եմ ցուցաբերում, ու այն է՝ զանգելու եմ ու ասելու եմ, որ գիտակցել եմ արարքիս ծանրությունը և անպայման կգամ... Ռուզիկի երկրորդ զանգը վերջ է դնում այդ մղձավանջին՝ ԿԳՄՍ նախարար Արայիկ Հարությունյանը հրահանգել է դադարեցնել բոլոր մշակութային միջոցառումները:

Առաջին զգացումս՝ անափ գոհումակություն. խելամիտ որոշումը, համընդհանուրից բացի, անձամբ ինձ ազատեց հետագա հոգեկան տվալանքներից: Ես թեթևացած շունչ եմ քաշում, նայում եմ շուրջս՝ վերջին մեկ ամսվա ընթացքում առաջին հանգստյան օրն է, որ կարող եմ տնից դուրս չգալ ու... այնքան հավաքված գործ կա անելու: Թեքերս քշտում, անցնում եմ գործի, բայց աստիճանաբար եռանդս մարում է, ի՞նչ է կատարվում ինձ հետ... Ընդմիջում եմ հայտարարում, բուրավետ սուրճի գավաթը դնում եմ սեղանիկին ու... այնպիսի տխրություն է համակում ինձ, այնպիսի մի տագնապ: Այդ պահին երևի առաջին անգամ որոշակիորեն գիտակցեցի գալիք փորձության ահագնությունը, իսկ հետո... Միայն իմանաք, թե ո՞նց էի ուզում ներկայացումից ժամ առաջ հագնվել ու հասնել «Մետրո» թատրոն... Միայն իմանաք՝ ինչ զոհողության էի պատրաստ «Սև կատուն» դիտելու համար...

Այդ օրը, այդ ժամին ես դեռ չգիտեի, որ առջևս բազում օրեր են՝ երբ տարուբերվելու ենք անցյալ դարձած սովորական ու ներկա անսովոր կյանքերի միջև, նաև չգիտեի, որ «ԿՈՐՎԻԴ-ՔՐՈՆԻԿՈՆ» եմ գրելու «Դիտանկյան» փոխարեն: Այնպես որ, սպասեք հաջորդ շաբաթ շարունակությանը...

Ձեր՝ Կարինե ԽՈՂԻՎԱՆ



Հրաչ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՆԱՐԵԿԸ, ԳԱՐՈՒՆԸ, ԹՈՉՆԱԿԸ ԱՊՐՈՒՄ ԵՆ...

Ինքնամեկուսացված եմ: Առավոտ վաղ բացում եմ լուսամուտը, և ներս է լցվում զարուն ու սերը փառաբանող թռչնակի դայլը: Քամին մի քիչ կապույտ է գողացել Սևանա լճից, բերել, փաթաթել է դիմացի բարդուն: Բարդին հրճվում է լճի ու երկնքի կապույտ մահճում և ճոճվում է, ճոճվում ինքնասուզված: Բարդին դեռևս չի կանաչել: Լեռնաշխարհում զարունը հազար նագով է գալիս, և ծառն իր կակղած ճյուղերը թաթախում է երկնքի երակների մեջ:

Երկու տարեկան թռնիկս՝ Նարեկը, պտտվում է՝ թևերը պարզած, ինքն իրեն ոգևորում է ու հրճվում. «Պիտո՛ւ, պիտո՛ւ... Պիտո՛ւ, պիտո՛ւ...»: Պտտվում է, հետո կանգ է առնում ու զարմանում՝ երկրագնդի պտույտն զգալով:

Ուշացող զարունը, բարդին, դայլալող թռչնակը, Նարեկը չգիտեն երկրագնդի վրա թավալվող վարակի մասին: Իրենք իրենց գործին են՝ ապրում են: Ապրում են՝ կյանքի մասին չմտածելով, մեկուսացման ու ինքնամեկուսացման մասին չհոգալով, և հրճվում են զարման գալով:

Հոգսը ավելի շատ մեծերին է պատել: Իմ կարծիքով, աշխարհում ոչինչ հենց այնպես տեղի չի ունենում: Ամեն բան ունի իր պատճառը: Վարակը նույնպես իր պատճառներն ունի: Ծիշտ է, ես իմ նկատառումներն ունեմ, բայց չեմ խոսի դրանց մասին: Գրանք ավելի ուշ կպարզվեն:


Բայց միտքս զնում, կանգ է առնում անցյալ դարավերջի վրա, ու հիշողության բելին եմ շարում դեպքերը. աշխարհակործան երկրաշարժ, կայսրության կործանում, որի փլատակների տակ մնացինք մենք, անկախության առաջին տարիներ, Արցախյան պատերազմ և անլույս, հույսը բարակացնող տարիներ, որոնց ընթացքում հազար ու մի վարակ տարանք՝ հաճախ նույնիսկ դրանց անունները չիմանալով: Եվ հաղթեցինք, հաղթահարեցինք, չէ՞: Նաև կորուստներ ունեցանք: Սա էլ կհաղթահարենք, վստահ եմ: Նաև կորուստներ կունենանք, ցավոք սրտի, նաև մարդկային կյանքերի կորուստ:

Շատ վախենալ պետք չէ, չնայած անհրաժեշտ է հետևել բժիշկների խորհուրդներին, պահպանել անվտանգության կանոնները: Իգուր չէ, որ հնում ասում էին. «Արա, ինչ պարտավոր ես անել, և թող լինի, ինչ լինում է»: Իհարկե, մեր նախնիները նման դեպքերում հույսն Աստծո վրա էին դնում:

Մարդը օձի թույնից դեղ է ստանում, ապրեցնող դեղ: Հիմա նույնպես այդպիսի ժամանակներ են: Մեկուսացումն ու ինքնամեկուսացումը հարմար առիթ են, որպեսզի անընդհատ վազքի մեջ գտնվող ժամանակակից մարդը մի պահ կանգ առնի, նայի իր ներսը, փորձի գոնե մի քիչ խմբագրել ու սրբագրել ինքն իրեն: Փորձի պայքարել սեփական հոգին ճարակող կրքերի դեմ, մեղքերի դեմ պայքարի, մի քիչ նայի իր ներսը և մտածի, թե ո՞վ է մարդը և ինչո՞ւ է հայտնվել Երկիր մոլորակի վրա: Նաև իրենից բացի ուրիշին սիրել սովորի: Ո՞վ է ուրիշը: Իհարկե, առաջին հերթին իր մերձավորը: Հարկ է, որ մեզնից յուրաքանչյուրը փորձի իսկապես հասկանալ իր մերձավորին, հավատալ և վստահ լինել, որ ամենալավը նա է՝ աշխարհում իրեն բաժին հասածը, իր բաժինը, իր գավակը, մայրը, ամուսինը, կինը, եղբայրը, քույրը... Եվ հարկ է նաև աստար ու բերդ լինել միմյանց: Մեր ժամանակները մեզ ետ են վարժեցրել մարդկանցից, նույնիսկ եթե այդ մարդիկ մեր հարազատներն են...

...Ուշացող զարունը, բարդին, դայլալող թռչնակը, Նարեկը չգիտեն երկրագնդի վրա թավալվող վարակի մասին: Իրենք իրենց գործին են՝ ապրում են: Ապրում են՝ կյանքի մասին չմտածելով, մեկուսացման ու ինքնամեկուսացման մասին չհոգալով, և հրճվում են զարման գալով: Իսկ ես քայլում եմ տան մեջ՝ թռչունի դայլայլին ու Նարեկի հրճվալից ծիծաղին խառնելով մեղեդիկիս չխկչխկոցը: Երթունքներս հին, բայց չհնացող աղոթք են ուղղում Նրան, Ով գիտե իրական պատճառն ու հետևանքը ամեն բանի.

«Ողորմեա, Դու ստեղծեր, մի՛ կորուսաներ, զգործս ձեռաց Քոց մի՛ անունը առներ»...



Անդրանիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԵՏՀԱՇՎԱՐԿ

- Տեսնես որքա՞ն կտևի Աստծո համբերությունը...
- Աստված Մեր է,- հիշեցնում էր սևազգեստ քահանան, Ու մենք մտածում էինք, որ սիրո գույնը սևն է-

Հանգցնում էինք սենյակի լույսը, Արտաշեսյուն էինք պատուհանի սառը ապակում Եվ նետահարված սրտեր նկարում Գիշերվա երկնքի սև ֆոնին...

- Տեսնես որքա՞ն կտևի Աստծո համբերությունը...
- Աստված ողորմած է,- ասում էին տարեցները


այս ու այն կողմից, Ու մենք ապավինելով նրան, Որ Աստված մեզ կողորմա ու միշտ կների- Մսխեցիկը նրա տառը պատվիրանները, Ուրացանք բոլորին, բացի ինքներս մեզանից...

Աստված, որպես գայրույթի նշան, Երկրաշարժեր, ջրհեղեղներ, հրդեհներ Ուղարկեց մեզ, Մենք հակադարձեցինք Կեղծիքով, անօրինությանը, ապականվածությանը, Անգամ նրա ուղղությանը ատելության հրթիռներ ուղարկեցինք: Աստված տարուբերեց հոգևած գլուխը Եվ փակեց բոլոր զգայարանները...

«Տեսնես որքա՞ն կձգվի Աստծո գայրույթը», - մտածում ենք մենք հիմա... Աստծո սիրտ է,- ասում էր մայրս Եվ ձեռքի ճաղերը խրում կանաչ կծիկի մեջ.
4... 3... 2... 1...

Այս բանաստեղծությունը, որ գրել եմ մտո մեկ շաբաթ առաջ, կարդում եմ ամեն օր ու ամեն անգամ մտածում՝ տեսնես ո՞րն է Աստծո հետհաշվարկի սկզբնաթիվը, և ե՞րբ է դափնեճյուղը կտուցին մի աղավանակերպ հաղորդագրություն գալու մեր մենության տապան, որ մենք մեզ բաց թողնենք մաքրված երկրի ու երկնքի փողոցներով և... ինքներս էլ մաքրված՝ Աստծո այս դրախտ ժամանակը կորցնելու վախից պտտենք մեր բաժին երկրային ժամանակի սլաքները...

«Աստծո սիրտ է», - ասում էր մայրս.
3... 2... 1...



Հակոբ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Ոչինչ այնքան հեշտությամբ չի մատնում մեր ապրումները, մտածումները, մեր նկարագիրը, որքան խոսքը: Դա միաժամանակ մեր բարոյական շունչն է: Գարեգին Նժդեհ

Ամեն ինչ աշխարհում առաջացավ Խոսքից. «Աստված ասաց, և եղավ...» (Ծննդ. 1:3): Քվանտային ֆիզիկայի ժամանակակից մասնագետները համոզված են, որ մարդկային կյանքի ձևավորման սկզբնաղբյուրը միտքն է (ասել է թե՛ խոսքը, հետևաբար և՛ բառը): Ամեն ոք իր մտքերի շնորհիվ է ենթարկվում կյանքի մեծագույն գաղտնիքին՝ ձգողականության օրենքին (ինչպես ասում են՝ մեծ գնման գտանք): Մենք ենք ՀՈՐԻՆՈՒՄ կյանքը, ու մտքի էներգիաշատը, տարածվելով շուրջը շուրջը, վերադառնում է մեզ արդեն որպես նյութերեն իրականության կամ էլ միֆի խորհրդավորություն: Ժողովրդական բանահյուսությունն ասում է՝ ինչ որ ցանես, այն կհնձես: Ու շատ կարևոր է, թե ինչ սերմ (խոսք, բառ) կզգես հողի մեջ, որովհետև բերքը (մտքով պայմանավորված Բանը) դրանից է կախված: Այո՛, իրականության մեջ անհատը բնականորեն սկսում է իրեն ձգել այն մտքերը, որոնք իր ուղեղում են՝ որպես հիշողություն, և որոնք իր շուրջը պարբերաբար կրկնվում են, և ամենևին էական չէ՝ գիտակցաբար է, թե ոչ, ճիշտ է, թե սխալ:

Ռոնդա Բերնի «Գաղտնիքը» գրքում գրող, քվանտային ֆիզիկայի մասնագետ Ֆրեդ Ալան Վուլֆը նշում է. «Խոսքն այն մասին չէ, որ ցանկալին ընդունենք իրականի տեղ կամ երևակայականը՝ իրողության: Խոսքն այլ, ավելի խոր և հիմնային հասկացության մասին է: Քվանտային ֆիզիկան իսկապես մոտենում է մեծ հայտնագործության: Այն ասում է, որ դուք չեք կարող պատկերացնել ու հասկանալ տիեզերքը, եթե չեք ներդաշնակել նրան ձեր գիտակցությունը և չեք ընդունել, որ, իսկապես, գիտակցությունը ձևավորում է այն ամենը, ինչ ընկալում է»:

Բառը մտքի նշանն է տեքստում և կյանքը ձևավորող ուղեբժ: Ուշադրության արժանի է բանաստեղծ Սլավի-Ավիլի Հարությունյանի բառի նշանագրումը. «Բառը կորուսյալ կյանքի/բրածո կողմ է/ինչպես մարդու արարքը/այնպես էլ/խոսքն է կարևոր/այսինքն խոսքը/բառի արարքն է» («Բառը»):

Ազգային-ազատագրական վերջին շարժումը՝ Արցախյանը, հայերի համայնական մտքի ու ոգու ծնունդ էր, ու պատահական չէր, որ հողը լույս աշխարհի հանեց աշխարհակալ Տիգրան արքայի անունը կրող քաղաքներից մեկը՝ Տիգրանակերտը՝ որպես նոր ստեղծվող պետականության խորհրդանիշ: Սա թերևս մտքի արարման միֆական արձագանքն է իրականության մեջ՝ հառած տվյալ տեղում ու տվյալ պահին՝ որպես մեր կյանքը ձևավորող օրինաչափություն: Ուստի ավելի քան կարևոր է գրի (տեքստ, բառ, խոսք) դերակատարությունը մարդկային փոխհարաբերություններում (արդյոք պատահական է, որ ժողովրդը հավատում է թուրք ու գրին):

Վեր կանգնելով առասպելապատմի երանգներից՝ դիտարկենք հայ իրականության մեջ բացառիկ նշանակության երկու տեքստեր՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հիմնները՝ դրանք մեկնելով որպես մատուցվող միտք մեռնողի ու ապրողի կամ մեռնողի ու ապրեցնողի փիլիսոփայության շրջանակում: Թերևս հիմնը պետք է արտահայտի ապրողի, ապրեցնողի աշխարհայացքը, ոչ թե

լինի սուկ գաղափարախոսություն (հանրահռչակում)՝ մեռնողի հոգեբանությամբ: Ցավոք, պետք է վկայեն՝ մեր երկու հանրապետությունների հիմններն էլ այս իմաստով խոցելի են, և նրանցում պակասում է հաղթողի, ապրեցնողի, արարողի հոգևոր լույսը: Մանրամասնենք.

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ յուր ազգի
Ազատության կզոհվի:

Մահ, մեռնել, զոհվել բառերով ստեղծված քառատողը, անձնվիրություն ենթադրելով հանդերձ, իրականում տարածում է մահվան, կորստի, փակուղու իմպուլսային մտածումները: Մեր հիմնը ոչ թե խրոխտ, ոտքի հանող է, այլ հեզության ու խոնարհության տանող: Չգիտես ինչու, մոռացվել է, որ մարդ ոչ միայն մեկ անգամ մեռնում է, այլև մեկ անգամ ապրում է, ու ավելի լավ է՝ իր ազգի ազատության համար ապրի: Փակուղային, ինքնամեկուսացման փիլիսոփայությամբ է տոգորված Արցախի Հանրապետության հիմնը: «Քո տուն-ամրոցը կերտեցինք.../Դու բերդ ես անառիկ.../Մեր հին ու նոր Ղարաբաղ.../Մեր վանքերով լեռնապահ՝/Անհաղթելի մի բուռ աշխարհ»: Տեքստում ամ-

դրստորոմները մշտապես կան, ու գրողի պարտքն է դրանք ներկայացնել անաչառորեն: Այսպես, մեր օրերի պատերազմի բանաստեղծուհի Նոնա Պողոսյանը գրում է. «Մեր սահմանը գիծ չէ, ոչ էլ խրամատ.../Մեր սահմանը զինվոր է՝/Քաջագուն երակ/Ռրի բաբախով/Մենք մտնում ենք կյանք...» («Պատերազմապատ տարածքներ»): Ոչ վաղ անցյալում հայ գրողը մեծ մտայնությամբ բանաստեղծություն հագիվ թե գրեր, իսկ այսօր այն շատ համահունչ է ժամանակին ու ապրեցնող: Հայրենիքը զինվորյալ բանաստեղծուհու համար չեզոք գոտի չէ, այլ նվիրում է ու ներշնչանքի պանծացում. «Ինձ սեր հագցրու, հագցրու հաղթանակ/Ուզում եմ քեզինց նորից ընձյուղվել/Ծաղկել օրերիդ՝ իբրև ժամանակ» («Պատերազմապատ տարածքներ»): Բանաստեղծ Նորայր Գրիգորյանն էլ հայրենիքի հարատևությունը տեսնում է ծաղկած զինվորների կենսաավիշի մեջ. «Ծեր զինվորները ծաղկած ծառեր են կապույտ լեռներում, նրանք ամեն օր պողպատով են փամփուշտներով» («Ծեր զինվորի ծոցատետրից»):

Գրականագետ Նորայր Ղազարյանը 2017 թ.-ին «Գրական թերթ»-ում զինվորական թեմայով համայնապատկերային հոդված էր հրատարակել՝ «Զինվո-

ՄԻՏՔԸ՝ ԿՅԱՆՔԻ ՍՈՒԲՍՏԱՆՑ

րոցը կա, բերդը կա, բայց դրանք ընդամենը փոքրիկ տուն են, մի բուռ աշխարհ, ու այդպես էլ Հայաստանը չի երևում. միացման նպատակը չկա: Ազատ ու անկախ Արցախում, այդպես էլ չեն հասկանում, հին Ղարաբաղը ո՞րն է, ու նորը ո՞րն է: Մի խոսքով, հիմնի տեքստը կծկված է, անկումային տրամադրություն հաղորդող: Տարածված իմաստություն կա ժողովրդի մեջ. «Լացը լաց է բերում»: Հետաքրքիր է, չէ՞, մենք ինչ ուղեբժ ենք ստանում հիմններից՝ զոհի՞, հալածյալի՞, խաբվածի՞, այսպես ասած, տառապակոծ հայի՞, թե՞...

Գրականությունը, որ շարունակաբար ստեղծվել է և հիմա էլ գրվում է, շատ հաճախ նույնն է կրկնում և հայրենիքի հոնքն ուղղելու փոխարեն՝ աչքն է հանում: Ընչու է, մահը, ողբը, լացը, ճակատագրի հեզանքը շատ հուզազգայական բաներ են, բայց չպետք է մոռանալ, որ դրանք ննջեցյալին չեն կենդանացնում: Ժամանակն է մահախոսական գրից հրաժարվելու: Բանաստեղծ Սլավի-Ավիլի Հարությունյանն է գրում, որ հարկավոր է նոր գեղարվեստական նշանադաշտ («ինձ մի՛ սպանիր/ ինչպես հարյուր տարի առաջ» «Կարմիր - նարնջագույն - մարջան»): Հիրավի, գոյապահպանման մարմաջը պետք է փոխել ապրելու բաղձանքին. Հետևաբար. «Առանց վերագնահատումի՛ անիմաստ է որոնումը, իսկ առանց որոնումների՛ ոչ միայն ժողովուրդների միտքն է մեռնում, այլև հենց իրենք՝ ժողովուրդները: Վերանորոգվելու անընդունակ ժողովուրդները մեռնում են ամեն ժամ, ամեն վայրկյան» (Գարեգին Նժդեհ): Ի վերջո, գիտակցության ծիրում եթե պիտի դիտարկել մահը, ապա միայն ու միայն որպես կյանքի նախապայման:

Հայ գրողը պետք է իրեն համարի ազգի գրչակիր զինվորը: Անշուշտ, գրականությունը եթե չի կարողանում իր ժամանակը խորքով մինչև վերջ հասկանալ, գրվում է ժողովրդի հոգևոր կյանքում դերակատարում ունենալու առաքելությունից, այն շարժվում է իններցիոն, հակվում ձևապաշտությանը և պատային իրադրության մեջ անընդհատ կրկնվում է հոգնեցնելու չափ: Վերջերս շատ է խոսվում հասարակության մեջ գրականության նշանակության անկման մասին, հաճախ էլ՝ շեշտվում նրա աղքատիկ բովանդակությունը: Ժամանակը լոկ վառ երևակայությամբ չես ընկալի. այն հասկանալի է այնքանով, որքանով գոյություն ունի իրատեսական աշխարհայացք: Բնականաբար, տարբեր աշխարհաքաղաքական իրավիճակներում միանման չի կարող լինել երեկվա ու այսօրվա գրողների մտածողությունը, բայց ազգային

րագրյալ բանաստեղծական շարքեր» ոչ ներբողային, կենսապատմային վերնագրով: Խոսում, տպավորիչ, դիպուկ վերնագիրը, որն ամբողջական աշխարհայացք է, ցույց է տալիս հենց մտքի, խոսքի, բառի ազգային դրսևորման փիլիսոփայությունը, որտեղ պատերազմի ու ոչ պատերազմի սահմաններում «Բառի մեջ կրակող զինվոր կա» (Վարդան Հակոբյան): Հոդվածում Նորայր Ղազարյանը հնարավորինս փորձում է խուսափել բանաստեղծությունները որպես պատերազմական նկարագրումներ դիտարկելուց և այն ներկայացնում է կյանքի ու մահվան միջակայքում՝ որպես գիտակցված իր-խոստովանություն. «Վերջին նունկա/երբ որ այն պայթի/մատիցս հանեք օղակը նրա/որպես հմայիլ տվեք հայ կույսին՝/հանց հարսնամվեր» (Հակոբ Հարություն): Սակայն հաճախ հայ բանարվեստում փափագն ու խոստովանությունը տարանջատված են լինում կամ մեկը մյուսով ստվերված: Ազատամարտիկ բանաստեղծ Գագիկ Սարոյանը, որը ժամանակակից լավագույն բանաստեղծներից է և կյանքի ու մահվան միջև լսել է AKM-74 ինքնաձիգի երգը՝ «Կույր/Թափառական/Դեպի թիրախը սլացող/Իմ լուսածիր գնդակի կորագծով»: Հեղինակը չի դառնում այդ կորից թռչող շոշափողը, այլ շարունակում է մնալ լուսածիր գնդակի կորագծի բանաստեղծական պատկերում՝ մի փիլիսոփայությամբ զոհվող հերոսի. «Եվ նա՛/Իմ այսօրվա նահատակը՛/Իմ զինվորը կորովի/ Համբուրում է իմ խզակոթը/Համբուրում է/Անունները իմ զոհված տերերի/Անունները/Որ փորված են իմ սվինով իմ կոթին:Եվ նետվում է/Նետվում է/Նետվում է իմ տերը մի վերջին գրոհի:Եվ սվինն իմ շողում է/Ցուքերում անտարբեր լուսնի:Եվ իմ մարմնի ազնիվ պողպատը/Ես գգում եմ արյան մեջ/Իմ վերջին զինվորի/Իսկ հեռվում՝ հեռավոր/այն դիրքերում/Դեռ բուրում է ցնորքի մեջ ուրբը/Դեռ աճում է պատրանքը՝/Վճիռը լացող Աստծո» («AKM-74 ինքնաձիգի երգը»): Այս բանաստեղծության միտքը՝ կյանքը կանխորոշող, ինչքան էլ լինի գեղարվեստորեն բարձրակարգ, անկումային է, չի նպաստում ազգային ոգու կենսունակականությանը: Նմանապես նույն հոգեվիճակային բանաստեղծական գիր է Խաչիկ Մանուկյանի «Գոյամարտը». «Բարձունքը մերն է, տղերքը չկան/տղերքն ավելի բարձրում մնացին/Դիպան աստղերին, աստղերը հանգան/ու մրմուռ քվեց մեր ցամաք հացին:Շահեցի՞ր երկիր, թե՞ կորցրեցիր/բար-



Ժենյա ԲԱԼԱԹԱՐՅԱԼ

1984 թ. «Սովետական կուլտուրա»-ի քրթակից Մ. Իսկոլդսկայայի հետ հարցազրույցում Մաքսուայանը խոստովանում է, որ Թումանյանը հոգեպես եղել է մշտական ներկայություն իր կյանքում. «Ամենաառաջին կարդացածս տողերից ինձ հետ է Հովհաննես Թումանյանը՝ ինչպես գետակը հոսում ու աննկատելի ոռոգում է հողը: Այդ հիմքից են աճել սերը, հիացմունքը հայերեն բառի, հայոց լեզվի նկատմամբ: Կարծում եմ՝ հենց Թումանյանն է ինձ նախապատրաստել իսկական գրականության ընկալմանը: Այն ամենը, ինչին նա դիպել է, դարձել է փաստ, հայ մշակույթի ոգեղենության մաս, այդ թվում՝ Պուշկինից կատարած թարգմանությունները» (Հր. Մաքսուայան, Ես ես եմ, 2005, էջ 243): Մաքսուայանը խոսում է ոչ միայն բանաստեղծ Թումանյանի, այլև մի մարդու մասին, ով բարոյականության, հայրենանվիրության, մարդկայության բարձրագույն օրինակ է, ով խոր հետք է թողել մարդկանց հիշողության մեջ: Նա ընդգծում է բանաստեղծի հատկապես խաղաղարարական առաքելությունը ազգամիջյան կոնֆլիկտի ժամանակ: Այս ամենը չէր կարող չոգեչնչել Մաքսուայանին. «Մի ժամանակ ուզում էի Թումանյանի մասին գիրք գրել: Մտադրությունս չստացվեց: Բայց իմ շատ գործերում ծնակուտցիները հիշում են նրա կյանքի տարբեր դրվագները, նրա բանաստեղծությունների տողերը: Թումանյանի մասին մեծ հատված կլինի այն վիպակում, որ հիմա գրում եմ: Ուզում եմ, որ այդ առանձին հատվածներից ձևավորվի հրաշալի բանաստեղծի, հայրենասերի, քաղաքացու կերպարը» (նույն տեղում): Հավանաբար ակնարկում է «Տախը» վիպակը, որտեղ մի մեծ հատվածի փոխարեն կան բազմաթիվ ոչ մեծ հատվածներ: Նշված հարցազրույցից առաջ արդեն գրեթե իր բոլոր երկերում, առաջին՝ «Ահնիճոր» ակնարկից մինչև վերջին՝ այդ օրերին դեռևս չավարտված ու անտիպ երկերը, Մաքսուայանն անդրադարձել է Թումանյանին ամենատարբեր առիթներով՝ ժողովրդական ընկալման միջոցով ներկայացնելով նրան իբրև մարդ, քաղաքացի, բանաստեղծ ու հասարակական գործիչ: Ժողովուրդն անվերապահ է իր գնահատականների ու բնութագրությունների, ինչպես նաև իր սիրո ու Մեծ լռեցու նկատմամբ ունեցած հավատի մեջ, որը լրացուցիչ նրբերանգներ է հաղորդում Թումանյանի կերպարին: Մաքսուայանի միջոցով փոխանցվող ժողովրդական վերաբերմունքը հարստացնում է Թումանյանի՝ գրականությունից ու գրականագիտությունից հայտնի կերպարը, այն ներկայացնում նոր լույսի տակ և նոր հնայքով: Ըստ Հր. Մաքսուայանի՝ Թումանյանը ժողովրդի հիշողության մեջ ամենից առաջ տպավորվել է իբրև ազգափրկիչ, ինչը կապված է ազգամիջյան կոնֆլիկտի ժամանակ բանաստեղծի խաղաղարարական գործունեության հետ: Թումանյանն ինքը իր այդ գործունեությունն ավելի բարձր էր գնահատում իր ստեղծագործությունից: «Եվ այսօր ես

այնքան գոհ չեմ, որ գրականության մեջ մի որևէ բան եմ արել, որքան գոհ եմ, որ ակներև կարողացա իրար դեմ կանգնած ժողովուրդների սրերը պատյան դնել տալ և շատ ու շատ անմեղների ազատել այդ գազանական կոտորածից» (Հ. Թումանյան, ԵԼԺ, հ.10, էջ 15): Ժողովուրդը դա չէր կարող մոռանալ, մանավանդ լռեցիները, որոնք ապրում էին թուրքերի անմիջական հարևանությամբ: Եվ ժողովուրդն ստեղծեց Թումանյանի կիսաառասպելական կերպարը: Երևույթ, ինչպես Ա. Բակունցի «Մուրդի գրույցը» պատմվածքի Մուրդն, Մաքսուայանի առաջին իսկ ակնարկում՝ «Ահնիճորում» Մարցեցի Մուխտիլ պապը ներկայացնում է առասպելացած բանաստեղծի կերպարը: «Մարցեցի Մուխտիլ պապը պատմում է, որ ժողովրդին ջարդել ու տեղահան է արել լազգու Հասանխանը: Չրույցն է ասում: Չորերում ճրագը մի անգամ էլ էր հանգչելու: Թուրքերն էին հանգցնելու: Հովհաննես Թումանյանը չբողեց: /- Հա՛, ինքը չբողեց, Ուհաննես Թումանյանը: Տեսավ, որ էս ժողովրդի գլուխն ուզում են ուտեն պրծնեն, նալ նստեց, Բաթումա

է, եղել է» («Ծառերը», էջ 455): «Ծառերը» վիպակի հերոսուհին ընդվզում է մարդկային նման վարքագծի դեմ. «Չեք վատերի ցավից Հովհաննես Թումանյանը կույշ է եկել, մի բուռ կաշիուսկոր դարձած ռուսաստաններում հոգին տալիս է նրանց բարակ աղյալի տակ, ռուսներն, ասում է, վերմակ չունեն, նրանց վերմակն, ասում է, աղյալն ու բանակային շինելն է: /Չարուբարու ցավերից Թումանյանը ռուսաստաններում մեռնում է...» (ն. տ., էջ 455): Այս դատողության մեջ հեռավոր արձագանք կա դաշնակցականների գործով Թումանյանի բանտարկության և Պետերբուրգ տանելու վերաբերյալ: Ինչպես բնորոշ է ժողովրդական ավանդությանը, այստեղ միախառնվել են պատճառը, հետևանքը, ժամանակը, բայց ընդհանուր առմամբ ճիշտ է ընկալված իմաստը: Այդպես էր իսկապես մտածում ժողովուրդը, դժվար է ասել, բայց Մաքսուայանն ստեղծել է դեպքերի ու երևույթների ժողովրդական ընկալման պատրանքը և ընթերցողին համոզում է դրա մեջ: Այստեղ մենք գործ ունենք ոչ միայն Թումանյանի կերպարի բացահայտման, այլև Մաքսու-

մանյանի եղբոր՝ Ռոստոմ Թումանյանի շուրջ: Այստեղ, կարելի է ասել, հարցը ճյուղավորվում է: Խնդիրն այն է, որ Մաքսուայանի ստեղծագործություններում քանի որ հերոսները մի երկից տեղափոխվում են հաջորդ երկ՝ բնավորության ու կենսագրության նույն գծերով, որոնք ամեն հաջորդ երկում լրացվում ու ամբողջանում են, ապա այդ լրացված կապերում երևան են գալիս բարեկամական ու ազգակցական կապեր, ինչի արդյունքում գրեթե բոլորը դառնում են մոտավոր ու հեռավոր ազգակիցներ, խնամիներ, քավոր-սանիկներ, հարևաններ, որը ինչ-որ չափով բնորոշ է գյուղական համայնքների համար: Այսպիսի պարագաներում հասկանալի են դառնում այս կամ հայտնի մարդկանց կրկնվող անունները: Բնական է, որ այս դեպքում այդպիսի ցանկում առաջինը պետք է լինեն Հովհաննես Թումանյանի անունը: «Տաշքենդ» վեպում հանդիպում ենք այսպիսի բացատրության. «Մեր Ալեքսանդր եղբայրը՝ Ծնակուտի ըռխավոր գյուղամիջի դեմ մեր անլեզու տան իրավաբանը, գնում է Դսեղա մեր քեռուն Հովհաննես Թու-


ՄԱՐԳԵՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ՝ ԸՍՏ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆԱԳՐԱՆՈՒՄԻ

ծովովը գնաց թուրքի թագավորի մոտ: Ասաց. բա ամհարմար չե՞ս գգում... Չէ, դու ինձ ասա, իսկի ամոթ չե՞ս անում: Էս խառնակ ժամանակներումը որ էս մի ամբողջ ազգի գլուխը կերար, բա հետո որ խաղաղությունն ընկավ, ի՞նչ պատասխան պտիս տալ մե՞նձ ազգերին: Թագավորը մտածեց ու փաշին ետ կանչեց» (Հրամոտ Մաքսուայան, Երկեր, հ.1, 1985, էջ 9): Ազգափրկիչ Թումանյանը սրբացվում է ժողովրդի կողմից: «Եզրով» վիպակում Աղունն է վկայում. «Հովհաննես Թումանյանի սուրբ ու սրբացած անունը Վանքերի իմ հորանց տան անուններից է» (Անտիպներ, հ.1, 2017, էջ 443): Թումանյանի փրկչական այս առաքելությունը ժողովուրդը փորձում էր տարածել նաև ներքին հարցերի լուծման վրա:

Արդեն իսկ պատմությունից, հուշագիրների վկայություններից, Թումանյանի կենսագրության լրացվող տվյալներից հայտնի են բազում փաստեր, թե հայրենակիցները ինչպես էին ամենաբազմազան խնդիրներով դիմում բանաստեղծին, բարոյապես ճնշում նրան, պահանջում, որ իրենց օգնի: Ստեփանոս Մալխասյանին հղած նամակներից մեկում Թումանյանը գանգատվում է, որ այնքան շատ է զբաղված օտարների գործերով, որ աչքաթող է արել սեփական երեխաներին: Եվ ահա ժողովրդի մեջ ստեղծվում է ամենափրկիչ Թումանյանի կերպարը, որը կարող է բոլորին օգնության հասնել: Նման մի դրվագի մասին է պատմում «Ծառերը» երկի հերոսուհին. «Վանքի պատին իմ հոր գնդակը մեխվելու հետ տերտերը ներսից ասում է. «Հովհաննես Թումանյանը քեզ փրկեց, փրկեց»: Տո ես քո սև գլուխը թաղեմ, խի՞ Հովհաննես Թումանյանն է նստեղ բուսած մշտական ծառն է, խաչքա՞ր է, որ ձեր պարսպ սրտով մեկ մատնություն ու շնություն ու դավաճանություն անեք ու թվանքն աչքներիդ կալնի թե չէ՞՝ փախչեք մտներ ետևը: Հովհաննես Թումանյանը բանաստեղծ է. ինքն ու Իշխանը նույն Չորանենց թռուներն են... Հովհաննես Թումանյանը իր հայոց բարձր հասակով կանգնելու է Իշխանի ճամփին - «լավ, Իշխան, ինչ եղել

յանի ստեղծագործական հնարանքի հետ, այն է՝ բացակա մարդու կերպարն ստեղծել գործող հերոսների բնութագրությունների ու հուշերի միջոցով: Մաքսուայանի բոլոր երկերում Թումանյանը կերպավորվում է ոչ թե հեղինակային խոսքի միջոցով, այլ բացառապես ըստ ժողովրդական «մեկնաբանությունների»: Մասնավորապես՝ «Տախը» վիպակում ամենուր նկատելի է Թումանյանի հետքը. որտեղով է անցել նա, ինչ ծրագրեր ու նպատակներ է ունեցել, ինչպես է ժողովուրդը վերաբերում այդ ամենին: Ժողովրդի հիշողության մեջ, որ անցնում է սերնդեսերունդ, Թումանյանի ոչ միայն ստեղծագործությունը, այլև անձը ծուլված է բնաշխարհին: Ինչպես Համբուն Թիֆլիսից տուն վերադարձին անվերջ հիշում է Գիբորի հետ կապված այս կամ այն դրվագն ու տեղանքը, այդպես էլ բնաշխարհի մարդիկ հիշում են, թե Թումանյանն ինչ տեղերով է անցել, ինչ նախասիրություններ է ունեցել, որտեղ է երագել տուն ունենալ, որ այգու խնձորով է ծարավը հագեցրել և այլն: Այն տպավորությունն է, որ Մաքսուայանը գնում է Թումանյանի հետքերով՝ այս անգամ հենց նրա հուշը արթուն պահելու մտադրությամբ: Ահա՛՝ «Հին հնում, հարյուր տարի առաջ, բանաստեղծ Հովհաննես Թումանյանի խումբն անցնելիս այստեղ ձիերի գլուխը պահել է, ծարավ Թումանյանը մայել է այգու խնձորներին, ձիավոր ուղեկիցը ձիու վրա կանգնել է՝ ծառից խնձոր պոկելու. հետո Թումանյանը մեր պապին կանչել է տվել, ասել՝ շա՞տ կնեղանաս, եթե ասեմ քու էս ձորը ծախի ինձ. մեր պապն ասել է՝ «դու քու քաղաքից արի՝ լոռով մեր հայ ժողովրդի պարծանքիդ». սա մեր պապի՞ պատասխանն է, սա գյուղացու՞ խոսք է - նախանձություն չկա, ոչ, հնարվել է հետո, երբ անցած-գնացած, արդեն հուշ են եղել մեր պապն էլ, Հովհաննես Թումանյանն էլ ու բոլորն էլ» (Երկեր, հ.2, էջ 424): Գուցե հետո է ժողովուրդը սրբագրել պապի ասածը, ինչպես ենթադրում է գրողը, երբ այլևս ոչ նախանձելու, ոչ էլ շարախոսելու հիմքեր չկային, որոնք ժամանակին հյուսվում էին Թու-

մանյանի անունով մեր անունը Հովհաննես գրի, բայց գնում տեսնում է Թեվան ենք...» (Երկեր 2, էջ 284): Բայց նույնականացման այս երևույթը տարածվել է ոչ միայն Հովհաննես, այլև նրա եղբայր Ռոստոմ Թումանյանի վրա՝ երկու պատճառով: Նախ՝ Ռոստոմը Հովհաննեսի եղբայրն էր, և վերջինիս հեղինակությունը ինչ-որ չափով տարածվում էր նաև եղբոր վրա, ապա՝ Ռոստոմն ինքը կարևոր պաշտոնյա էր՝ Մարցի կալվածքի կառավարիչը: Ռոստոմ Թումանյանը ժողովրդի մեջ, մեղմ ասած, բարի համբավ չունեց, բանաստեղծ էր անբարո վարքի և դաժանությունների համար, որին, ի վերջո, գյուղացիները սպանեցին: Առաջին հայացքից այս պատմությունը կարծես կապ չունի մեր թեմայի հետ: Բայց Հ. Մաքսուայանի երկու վիպակների՝ «Տերը» և «Տախը» երկերի հերոսը նույնն է՝ Ռոստոմ անունով, որն ասում է. «Մեզ և 1916-ի ձմռանը մարցեցիներից սպանված ու իր պատմությունը շատ արյուն ու թշնամություն բերած Ռոստոմ Թումանյանին նույնացրել էր» (Անտիպներ, հ.2, էջ 469): Իսկապես, իրական Ռոստոմ Թումանյանը և Մաքսուայանի վիպակահետքու Ռոստոմն ունեն բնավորության ու վարքագծի նույնական կողմեր, որը թույլ է տալիս մտածել վիպական հերոսի նախատիպի մասին: Կարելի է նաև ենթադրել, որ Ռոստոմ Թումանյանի սպանության իրական պատճառը եղել է, թերևս, ոչ այնքան նրա անձնական վարքը կամ բարոյականությունը, որքան անտառը ապօրինի ծառահատող և դրանից շահույթ ստացող գյուղացիների և դրա համար պատասխանատու Ռոստոմ Թումանյանի միջև մշտական հակասությունը: Այս հանգամանքը օգտագործում էր «Մշակ» թերթը՝ կազմակերպելով և իր էջերում տպագրելով Ռոստոմ Թումանյանի դեմ գյուղացիների գրած նամակները: Հարցն այն է, որ «Մշակը» ի սկզբանե Հովհաննես Թումանյանի նկատմամբ բացասական-հալածական դիրքորոշում էր բռնել, և Ռոստոմ Թումանյանի դեմ սկսված հալածանքը, ըստ էության,



Սմբատ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

Մարկ Մենուան գնդակահարվեց ապրիլի 14-ին, սուրբ Հովհաննես մենաստանում, որտեղ բնակվում էին հարյուր քսան կույսեր, և նրանք ամենադժբախտ կանայք էին բովանդակ աշխարհում, քանզի մաշում էին մարմինը՝ հոգին պարզաջրելով, Աստծո ներկայությունն ակնկալելով ամենուրեք, սակայն լքված էին ի վերուստ և հենց սա գիտակցելով՝ ընտրել էին երկակի կյանքը, որտեղ գիշերները նվիրված էին սիրեկաններից գաղտագողի սեր հափշտակելուն, իսկ օրերը ձանձիր, միօրինակ ու բարոյագուրկ էին: Շատերին տանջում էր գաղտնաձածուկ մեղք ունենալու հանգամանքը, գորշադեմ ամրոցում մենանալու անմտությունն ու մտքով անմաքուր լինելու գիտակցությունը, որ հայտնապես դրսևորվում էր խմբային աղոթքների ժամանակ՝ բանականության մեջ արթնացնելով սեռական հաճույքից մնացած հիշողություններ, որոնք կասեցնում էին Մեծ մոր աչքերին նայելու համարձակությունը:

Մենության անտախտություն...
Եվ կամ՝ անդորր անպարագիծ, անդորր ներանձնական, որից ունայնության ջրերն էին բխում:

Ապա եկան օրեր, երբ ահասարսուռ լուրերն էին չոքել գոց դռների առջև՝ վկայելով երկրում հասունացող պատերազմը: Միտեկանները չբացան հերթով, տարրալուծվեցին վառող շնչող բոցերի մեջ, իսկ կանայք աննախադեպ մտերմության ժամեր ունեցան, քանզի համախմբվում էին համայնական դժբախտության հրամանով և գաղտնիքներ էին խոստովանում միմյանց:

Եվ քամին հալածում էր թափանցիկ ճպրտների, որ ծեփվում էին թաց ապակիներից, և աշունը մեռնում էր նրանց թևերի տակ թաքուն դողերոցներից:

Աշունը մեռնում էր բազմիցս:
Գնդապետ Մարկ Մենուան առաջինն էր այն նվիրյալներից, որոնք ջոկատներ էին կազմավորել՝ մեկ առանցքի շուրջ համախմբելով դեռ պապերի հրացանն օգտագործող տղամարդկանց, որ հետո կմնան մոռացության փաստաթղթերում, իսկ նրանց ստվերները կցրվեն աշխարհով մեկ, կլինեն գաղթականներ, պատերի տակ ծնկաչոք հալածյալներ ու հայրենիքի համար արցունք թափողներ կլինեն:

Այլ էր պարագան, երբ թշնամու գրոհները կասեցվում էին դատարկ ձեռքերով, երբ երկիրը դեռ չէր մարսել պատերազմով ապրելու իրականությունը, որն ամեն օր վերադառնում էր պարտության սահմաններից՝ բերելով ցինկե դագաղներ, ողբ ու անհուսություն: Սա սկիզբն էր հակամարտության: Այնինչ մոտ մեկ տարի անց երկիրն ուներ զենք արտադրող գործարաններ, վառելիք,

ծանր տեխնիկա, հագուստ և դաշնակից երկրներ, որոնք ոչինչ չէին անում հաղթանակն արագացնելու համար ու ոչ մի կերպ չէին աջակցում՝ պահպանելով չեզոք բարեկամության սրիկայությունը:

Եռանկյուն մամակներ:
Պատերազմը հեռու էր մայրաքաղաքից, բայց յուրաքանչյուր շուկա, յուրաքանչյուր կինոթատրոն և յուրաքանչյուր անցող մի փոքր պատերազմ ուներ իր էության մեջ: Ահա հենց այս ժամանակներում կանայք որդեգրեցին գորշ հագուստներ կրելու մշակույթը, իսկ ցանցկեն վառարանները մնացին նկուղներում՝ վկայելով կիսակուշտ ձմեռներն ու զբոսայգիներից վառելիքայտ հավաքելու օրերը հոգեվար:

Մարկ Մենուան գնդակահարվեց ուշ գիշերով, երբ միանձնուհիներն իրենց սարսափն էին աղոթում գնդաններ հիշեցնող ճգնախցերում, երբ ստվերներն անգամ չբվել էին ականապատ դաշտերից՝ մենության մեջ թողնելով հաղթանազան գնդապետին, որ չէր հաշտվում այս իրականության հետ ու չէր հավատում, թե գնդակ կարձակեն հենց իր վստահությունը վայելող զինվորներն ու կյանք կխլեն նրանից, ով հայտնի էր մահվան չարքեր հալածելու թերևս գերբնական շնորհով:

Իրական մահը թիկունքում էր՝ այնտեղ, ուր համապետական դավաճանությունն էր հասունանում՝ արարելով նախապես գրվող մահախոսականներ, որոնք, սովորաբար, հերոսներին են հասցեագրվում:

Հետմահու:

Եվ իհարկե, Մարկ Մենուան մեկն էր նրանցից, ովքեր ռազմաճակատ էին մեկնել կամավոր՝ ետևում թողնելով օջախ, հավատ և ճակատագիր: Գնդապետին տանում էին հրելով, խզակոթի հարվածներ հասցնելով ծոծրակին, իսկ ձեռքերը կապված էին շագանակագույն լաթով: Արդյոք ո՞ւմ արյունն էր մնացել չգիտես որտեղից գտնված այս կտորի վրա, և ո՞վ էր եղել շապիկ պատռող այն զինվորը, որ գթության քրոջ օգնությունն էր երազել՝ սեփական վերքերի մեջ թավալելով: Մահապատժին մասնակցողները երեքն էին: Նրանք դեմք չունեին, որովհետև ծպտվել էին սև դիմակներ հիշեցնող, առածգական գլխարկներով, և չէին խոսում, չէին հաղորդակցվում միմյանց հետ, քանզի դողում էին նրանց ոտքերը, իսկ վճռականությունը դավաճանում էր ստեպ-ստեպ: Նրանք սարսուռում էին շրթայակապ մարդուց, և ջահերի լույսն անգամ զարհուրանք էր հարուցում: Ապա քամիներ արթնացան և ձյուն ծեփեցին մամռապատ պատերին, և մենաստանում անխոս կրակներ մարեցին, և բացվեց երկինքը՝ շռայլելով արծաթ, և շողեր կախվեցին ուղղանկյունաձև պատուհաններից, և գնդապետը ճանաչեց իր զինվորներին: Նա տեսավ, թե թռչունն ինչպես էր ճախրում երկինքն ի վեր՝ սուրեզր թևերի տակ լույսեր մարելով, տեսավ իր երազների երկիրը, որ աստղանկար պատառիկ էր պատուհան կոչվող բացվածքի մեջ, տեսավ սարսափն անբնական, որ ջրակալ էր իր մահը կամեցողների սևորակ աչքերում ու ամաչեց: Չէ՞ որ մարդկային կյանքն էր գերադասել մանր հաղթանակներից առավել և բազմիցս փրկել էր իր զինվորներին՝ զոհեր պահանջող առաջխաղացումից հրաժարվելով:

Չէ՞ որ խեղճին էր կարեկցել:
Չարագործության պերճախոս վկա-

ներն էին բահն ու քլունգը, որ բերել էին դեռ նախապես, իսկ անընթեռնելի գրություններով բարբառող մի տապալանաբար շրջել էին բերանքսիվայր՝ հողից հիշողություն կորզելով: Մարդաբոյ խոռչը հարաբաց աչք էր հիշեցնում: Անարգ այս իրականության մեջ էր հասունանում այն ճշմարտությունը, որին գնդապետը չէր հավատացել երբեք, բայց հիմա կանգնած էր երկվորյան առջև, և փլուզվում էր հավատավոր մարդու համոզմունքը:

Այստե՛ղ, նկուղո՞ւմ...
Այդպես անհեթեթ ու հե՞շտ...

«Սա մարգարեների՝ ճակատագիրն է: Միտքը չէր հեռանում ոչ մի կերպ, իսկ գնդապետը չէր հիշում կցկտուր իր ճառը, որ պատրաստել էր բազմիցս և կարտասանել անշուշտ, եթե ճակատագիրը փառավոր մահ հրամցներ: Մյուս, սա մարգարեների ճակատագիրն է, - մտովի կրկնում էր գնդապետը՝ ստվերներում թաքնվող զինվորներին զննելով:»

ԿՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ

Նրանց բոլորին յուրայիններն են մեռցրել և նկուղներում են թաղել, որպեսզի ժողովուրդը պառակտեն:»

Սակայն սա այսպես չէր լինելու, քանզի հերոսներով սակարկող հայրենիքը դիակներ էր պահանջում, ուստի և՛ գեներալին գնդակահարել էին ճակատային կրակոցով, իսկ թիկունքը անվնաս մաքուր էր: Դեղին, փառակալ ոսկորներ էին ցցվել հին գերեզմանից, որ քանդել էին իզուր, իսկ առաստաղի տակ թևածում էր նախագո մահվան ժահիրը: Հիմա, երբ ջահերն էին մարում՝ ճարպոտ մոխիր թողնելով աղոթարկու առարկաների վրա, երբ ժպտում էր կիսապուշ գանգը՝ հրաժեշտ հառաչելով, երեք զինվոր հանում էին գնդապետի մարմինը նկուղից՝ ճնճոտ աստիճանների վրա բազմիցս գայթելով: Մարտու կար լուրջան մեջ, և ունայնություն, և նողկանք, և քրտինք...

Դիակը մայրաքաղաք հասավ օրեր անց, և մարդիկ գերեզման տարան դագաղը՝ միմյանց փոխանցելով, երբեմն՝ լուռ, երբեմն՝ մրմնջալով երգեր, որոնք վրեժխնդրության ծարավն էին արթնացնում: Երկինքը մաղում էր ձյուն, երկինքը տրորվում էր ոտատակ, և փաթիլներ էին հալչում՝ լվանալով խոռոչանման վերքը, որ ճակատոսկրն էր փշրել՝ դեմքն աղճատելով ու ձագարած և բացվածք թողնելով ծոծրակին: Մի՞թե գնդապետն էր դագաղում պառկածը, մի՞թե թշնամին այսքան մոտ կարող էր լինել և կարող էր գնդակ արձակել սուկ մի քանի քայլ հեռավորությունից: Հարցերը տարակուսանք էին հարուցում՝ բերնեբերան փոխանցվելով, իսկ մայրաքաղաքում հասունանում էին խռովության կոչեր: Հետո Պաշտպանության նախարարը խոսեց՝ բռի մեջ հող ճմռելով, մերթ ընդ մերթ հիշեցնելով տարաբնույթ խոստումներ, որոնք մահախոսական չէին բնավ: Ապա կեղծ վկաներ մոտեցան գերեզմանին, պատմեցին նախապես որոշվածը՝ իսկությունը կոծկելով, և մարդիկ խաբվեցին դարձյալ: Նրանք հպարտացան իրենց հերոսներով, և կուրացան ատելությամբ,

և հնչեցրին մարտակոչեր՝ սրբություն համարելով պատերազմը: Եվ կար մի կին, որ հագել էր կարմիր և համբուրում էր գնդապետի ճակատը՝ արտասվելով արյուն: Նրան հեռացնում էին զգուշորեն, բայց կինը դիմադրում էր՝ բղավելով ճշմարտություններ, որոնք ավելորդ էին այլևս:

Կանցնեն օրեր, և կմոտենա հետքեր սրբելու ժամանակը:

Հարյուր քսան միանձնուհի դեռ բնակվում էր սուրբ Հովհաննես մենաստանում, և նրանք բոլորը ողբերգության վկաներն էին: Ոմանք հղիացել էին ամիսներ առաջ, իսկ նրանց անհայտ սիրեկանները գողանում էին գիշերներ, որոնք հետագայում ամուսնություն կարող էին ենթադրել: Այս ապագան կանխորոշում էր տարաբնույթ հետևանքներ, կանխորոշում էր հեղափոխություն, և հանրապետության նախագահը սա գիտեր անշուշտ: Հիմա էր գործելու ժամանակը՝ քանի դեռ ոչ ոք դուրս չէր եկել

կուսանոցից, ու չէին տարածվել ճշմարտության շշուկներ, որոնք, իհարկե, կպառակտեին երկիրը՝ քաղաքացիական բախումներ սկզբնավորելով ու խարխուլելով նորանկախ պետության ողնաշարը:

Սուրբ Հովհաննես մենաստանը ռումբ էր:

Միանձնուհիներից ազատվելու նպատակ հետապնդելով՝ գերագույն Հրամանատարը արհեստական նահանջ կազմակերպեց: Այս ընթացքում մի խումբ վարձկաններ հսկում էին տարածքը՝ մենաստանն անմատչելի դարձնելով և բացառելով կանանց շփումն արտաքին աշխարհի հետ, իսկ վերին հրամանատարությունն անորակ փամփուշտներ ու ժամկետանց սննդամթերք էր մատակարարում սահմանապահ ջոկատներին՝ ջլատելով ուժեր, որոնք սպառվեցին ապա, և հակառակորդը հաղթանակ տոնեց: Բարձունքը հանձնեցին անկանոն դիմադրությամբ, իսկ սուրբ Հովհաննես մենաստանը մնաց թշնամու տարածքում:

Պատերազմը խաղ էր:

Հաջորդ երկու տարիները հազեցած էին անկեղծ աղոթքներով: Եկեղեցի էին գնում անգամ հավատ չունեցող մարդիկ, իսկ քահանաները համաժողովրդական աղաչանքներ էին մատուցում առ Աստված՝ միանձնուհիների փրկությունն աղերսելով:

Երկինքը լուռ էր:

Եղերական այս լուրջան մեջ թևածում էին ճերմակ աղավիհներ, որոնք հող էին բերում գնդապետ Մարկ Մենուայի գերեզմանից և հող էին ցփնում ժամերգության մոմերի վրա, եկեղեցում գլխիկոր մարդկանց ու մարդադեմ աղոթքների վրա:

Լայնաճակատ ռազմական գործողություններ ծավալվեցին սուկ երկու տարի անց, երբ հակառակորդը ջլատված էր այլևս և սգում էր իր պարտությունն ապագա: Թերևս սա էր վերջին ու ամենամեծ հերոսամարտը, որ բազմաթիվ զոհեր խլեց յուրայիններից՝ ազատագրելով տանուլ տրված հողերն ու

վերադարձնելով սուրբ Հովհաննես եկեղեցին, որ դատարկ էր հիմա, և այստեղ աղվեսներ էին վխտում:

Տասներկու տղամարդ մենաստան մտան ու զիշերով, երբ հորդառատ անձրևն էր կախվել խրամատների վրա՝ փափուկ ցեխ դարձնելով հաղթանակ տոնող մարդկանց ուրախությունը, մտան գաղտնածածուկ ու եղան բոլոր այն խցերում, որտեղ բնակվել էին կանայք, և նրանք մամակներ էին թողել: Թողել էին ողբագին հիշատակություններ, որոնք Մարկ Մենուայի գնդակահարությունն էին վկայում: Այս տասներկուսը երբեք մարդ չէին սպանել, թեև մասնակցում էին ռազմական գործողությունների արդեն հինգ տարի շարունակ: Նրանք չէին վիրավորվել անգամ ամենաթեթև մարտերում՝ շատ-շատերի զարմանքը հարուցելով, ու անվնաս վերադարձել էին շրջափակման մեջ ընկնելուց հետո՝ շատ օրեր անց, երբ ոչ ոք չէր սպասում այլևս, իսկ արցունքով թաց աչքերը չորացել էին վաղուց: Տարօրինակ այս հանգամանքները ծնել էին կասկածներ, որոնք հույժ գաղտնի գեկույցներ էին դառնել հետո ու ներկայացվել էին վերին հրամանատարությանը:

Երբ մշուշն էր կախվում գետնափոր բլինդաժների վրա՝ հրադադար խոստանալով, երբ գայլերը բերում էին գիշեր, և երբ մահիկն արյուն էր ցողում ծառերին երկնուղեշ, երբ

բույրեր ու սևավոր կանայք, և նրանք բոլորը վկայում էին հետմահու ճշմարտություններ, և վկայում էին լույսը, որ հանկարծ բարբառում էր խեղճության մաշից:

Այս հաղթանակն էր մոտ, իսկ տասներկու տղամարդ չէին մարտնչում այլևս: Նրանք լույսի առաքյալներն էին. Մինաս, Վահան գողթնացի և Գանիել, Նազարեթ՝ Մեքաստիա քաղաքից, Կոմիտաս վարդապետ և Ակսել, որ ամենատաղանդավոր արձակագիրը եղավ հետագայում, Հովհաննես, Եղիշե բանաստեղծ, Սիմանթո և Միսաթ՝ Ակնա գավառից, Պարույր և Երուվան, որին մահ էր վճարել էին կոշտ: Այս տղամարդիկ մոխիր էին շփել երկինքն ի վեր և բուրձ էին հագել իրենց մերկ մարմիններին և ճգնում էին գիշերն ի լույս՝ մատյաններում թողնելով մարգարեական ճշմարտություններ, որոնք հաղթանակով պարտված լինելու խաբեությունն էին բացահայտում:

Օ՛ խաչադրոշմ ավետարաններ...

Հաղթանակ խոստացող այս պատերազմը չէր ավարտվելու երբեք, և հողաթավա նրանց հայրենիքը չէր դառնալու երկիր: Կզան խաղաղության օրեր, կլինեն ժամանակներ ուրիշ, և կգայթի տղամարդը՝ վերջնեկ այս ճշմարտությանը բախվելով:

Եվ տղամարդը հիվանդ կլինի:

Գարունը բույրեր բերեց, և բողբոջ, և տարերք, և խաշխաշ, և անձրևներ իջան բուռ-բուռ դիակների վրա՝ հողից քամելով արյուն: Գալարվեց թնդանոթների միսը՝ մտնելն հառաչանքներ շռայլելով, իսկ բուկոտն կանայք ծաղիկներ հավաքեցին ակնապատ դաշտերից:

Հրացանների վրա կոկոններ կախելու ժամանակն էր: Բայց Նազարեթ սեբաստացին գերեվարվեց ի վերջո, և նրան խոշտանգեցին տամուկ խցերում և մերկացրին մահապատժից առաջ: Արևը հրաբորբոք գունդ էր, ամենատես մի աչք, որ կախվել էր կախադանի պարանից ու գարնան լույսն էր սփռել վրեժխնդրության պատրվով հիվանդ տղամարդկանց վրա: Ծիշտ այն պահին, երբ մտրակն էր սուլում՝ մարմինը հաշմելով, թշնամու գեներալները կարողում էին մամակներ, որ կուսանոցի կանայք էին թողել, և գտնվել էին դրանք Նազարեթ սեբաստացու ծոցագրպանում: Գնդապետ Մարկ Մենուային առնչվող ճշմարտությունը բացահայտելով՝ թշնամու գեներալները արտակարգ խորհրդակցություն հրավիրեցին: Հիմա, երբ պարտված լինելու ցասումն էր մոլեգնում ամենուրեք, և մոտ էր հրադադար հայտարարելու իրականությունը, չէր կարող լինել առավել կարևոր մի հարց, փոխանակության համար գերիներ ընտրելուց բացի: Եվ նրանք ազատ արձակեցին հարյուր քսան կանանց, որ գերեվարվել էին սուրբ Հովհաննես մենաստանից, և վիրակապեցին նրանց վերքերը՝ ապագա փոխանակությանը մախապատրաստելով: Քանզի զարհուրել էին ճշմարտությունից և գիտեին, գիտեին անշուշտ, որ մենաստանը տրվել էր իրենց իբրև կառավարան՝ այն պարզ հաշվարկով, որ անաստված մուսուլմանը հաճույք կստանա մահ կլին մորթելիս: Կանայք ի սկզբանե ընդունվում էին իբրև խրախճանքի առարկաներ, բայց հիմա նրանք բոլորը վկաներ էին, և թշնամին ցանկանում էր, որ կանայք բարձրաձայնեն Մարկ Մենուային առնչվող ճշմարտությունն իրենց հայրենիքում:

Մուսուլմանը մահ մարդասեր էր:

Նրանք դեռ չգիտեին և կամ՝ չեն իմանա երբեք, որ հայրենիքը վաղուց թաղել էր կուսանոցի կանանց՝ Սև թղթեր ուղարկելով հարազատներին և պաշտոնապես հուղարկավորելով դատարկ դագաղներ: Մինչև իսկ՝ պետության դրոշմ էին փռել կափարիչներին՝ համազարկ հնչեցնելով: Վերադարձ չէր լինելու այլևս:

Եվ հիմա, պարտություն կրողն առավել բարձր էր իր բարոյականության մեջ: Նրանք գլխագին էին սահմանել Մարկ Մենուայի համար, բայց այդ մահը նրանց տրվել էր ձրի: Եվ վստահ էին նրանք, որ մի անգամ անիծվող երկիրը չի ապաքինվում լիարժեք, իսկ հաղթանակով հարուստ մարդն այնտեղ չի ճանաչում իր հայրենիքը: Եվ վստահ էին նրանք, որ մշուշներ կիջնեն զարեհասկերի վրա, և թռչուններ կլռեն վաղորդյան աղջամուղջներում, և հետագա սերունդները կվիճարկեն իրենց հայրերի հաղթանակը, որ պսակվեց տասներկու տղամարդկանց մարտիրոսությանը, քանզի նրանք մահն ընդունեցին այն բանից հետո, երբ լույսերով լեցուն վերջին դագաղն էին ուղարկել հայրենիք:

ՄԱԿԱՊԱՐՏՆԵՐԻ

երկինքը մաղում էր ձյուն՝ անտառներում զարհուր խելագարության վրա պատանք փռելով, գեներ դառնում էր աղոթք, իսկ կարոտը հաղթում էր տղամարդուն: Հոգեվա՛ր, հոգեվա՛ր մղձավանջներ, որ իջնում էին հանկարծ՝ լուրջուն պարտադրելով ու ծնելով ծանրակիր խոհեր, որոնք ներկա էին անգամ ամենաթեթև մարտերում և որոնցից փրկություն չկար: Տասներկու տղամարդ գտել էին ահասարսուտ վկայություններ, և սա երկփեղկել էր նրանց մտածողության մոդելը: Ո՞վ կարող էր ազատվել ճշմարտության բեռից, և ո՞վ կհավատար հաղթանակի սրբությանը, երբ նկուղում մորթված գնդապետն արդարություն էր պահանջում՝ ինչպես արյունն Աբելի՝ անդնդախոր խորխորատներից: Կրտսեր լեյտենանտ Նազարեթ սեբաստացին երբեք չէր բաժանվում ճգնախցերում գտնված մամակներից և կարողում էր դրանք՝ աստղանկար գիշերներ լուսացնելով: Նա մտաբերում էր տարակուսանք հարուցող այն օրերը, երբ մահանջում էին՝ գերագույն հրամանատարության առաջնորդությանը հետևելով, մտաբերում էր հող հանձնող իր ընկերներին, որ արտասովոր էին անթից, և գիտեր, գիտեր հարկավ, թե ինչ կարող է ենթադրել գերության տարվող կնոջ ճակատագիրը: Երբ մեզն էր իջնում դիահուտ խրամատների վրա՝ դիպուկահարներ կուրացնելով, երբ սսկվում էին կանեփ ծխող զինվորներն ու քրքիջները նրանց, տասներկու տղամարդ քչփչում էին նախադասություններ, որոնք միանձնուհիներն էին թողել իրենց թղթերում:

Ինչ-որ տեղ թափառում էին կիսահավատ խելագարներ՝ պատերազմ քրքջալով, ինչ-որ մեկը կորցրել էր իր երեխային և կամենում էր մահ, ինչ-որ տեղ այրվում էին փայտաշեն տներ՝ լափլեզ բոցեր տարածելով, իսկ տասներկու տղամարդ իրենց առաքելությունն էին բացահայտում: Նրանք տեսան լույսեր, որ ծփում էին՝ անթաղ մեռյալներից համներով, տեսան օրեր արեգմափայլ, և հիմա լուսաթաթախ էին խրամատն ու բլինդաժի գերանները սև, թոքախտավոր ստվերներն ու հուշերը նրանց, ցեխոտ թրթուրներով տանկերն ու թնդանոթները կիսափուլ, մերթ ընդ մերթ շնչահեղձ ռադիոկայան ու սուրբ Հովհաննես եկեղեցին, որտեղ ուրվականներ էին վխտում, իսկ նկուղից բարձրանում էր Մարկ Մենուայի հառաչանքը:

- Տղերք, կարող եք հանել գլխարկները, ճանաչել եմ ձեզ: Կարող եք և չկրակել, որովհետև ես հիմա ամոթից կմեռնեմ:

Այս իրադարձություններից հետո, պատերազմը մոլեգնում էր ևս երեք տարի, և տասներկու տղամարդ լույս էին հավաքում ցինկե դագաղների մեջ և դագաղներն ուղարկում էին քիկունք՝ համապատասխան հասցեներով: Լույսը մտնում էր մայրաքաղաք, և քաղաքում ողբում էին դատարկության վրա՝ կափարիչը տեղում թողնելով ու պահպանելով դագաղում շնչավոր լույսը, որ դատարկություն էր նույնպես: Եվ հավաքվում էին որդեկորույս մայրեր,

.....
Սկիզբը էջ 2
ձուները մերն է, տղերքը...
չկան»: Հիշյալ «Գոյամարտ» բանաստեղծությունը, ընդունված ու ճանաչված լինելով հանդերձ, չի դառնում հաղթանակածի երգ: Այս իմաստով մեջբերեն Լևոն Խեչոյանի «Մերի դռան գիրքը» վեպից մի հատված, որտեղ թշնամին հակառակորդ է ներկայացված, իսկ յուրային դասախոսին վերապահված է մեղադրյալի դերը. «Հենց համալսարանի գլխավոր մուտքից ներս էիր մտնում, ճեմասրահում

ՄԻՏՔԸ՝ ԿՅԱՆՔԻ ՍՈՒՔՍԱՆՑ

մի քանի ամիս առաջ կամավոր բանակ գնացած տղաների սև շրջանակներով լուսանկարներն էին պատին փակցված, պատվանդաններին՝ մեկական սպիտակ կամ կարմիր ծաղիկ: Չորսն էլ սահմանապահության ժամանակ եղերական մահով էին գոհվել, հինգերորդը գերի էր ընկել: ...Չոհերի՝ կյանքից զրկվելու գլխավոր պատճառը ոչ թե հակառակորդին էին հաշվում, այլ իմ դասախոսությունները»: Մեկնաբանության փոխարեն՝ անդրադառնամ Ռ. Հովհաննիսյանի «Հայի ոգու հետեղեռնյան կենսաշարժը Հակոբ Հարությունի «Կապույտ Հագ» գրքում» հոդվածի (ԳԱԱ ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 18, 2015, էջ 165-171) մեկնակերպին: Հոդվածագիրը վեպի գլխավոր հերոս է դիտարկում Հայի ոգին, որը միաժամանակ նույնացվում է հայի գիտակցությանը, մասնավորապես՝ հազարամյա փորձություն անցած հայ լեզունականի մտքին՝ աշխարհի մարտահրավերներին դիմակայող: Վեպի առանցքային գաղափարն այն է, որ հեղինակը ազգային գեների շարունակականությունը տեսնում է լեզունականի թռան համոզմունքում. «Հայրս արդեն արմատ է հողում, իմ արմատը հայկական հողում, և մեջքիս լցված հողն էլ, որ հավաքվել էր գոտկատեղիս, դարձել է գոտի՝ մեջքս պնդած ու վախս բռնած»:

Իսկ լեզունական Ղազար պապը հավերժ պայքարող հայի կերպար է, ինքնաժայթքող, ինքնաճեղքվող կերպար, որից ելնում է Վահագնի կրակը, իսկական որդի որոտման: Նրա և հայկական լեզունի կամավորների համար հաղթանակի բանաձևը աղոթքն է արդարության, իրավունքի, վրեժի... Վրեժի, որը նրանց ուղեկցեց ողջ կյանքում, մինչև իսկ այն ժամանակ, երբ դադարել էր զինավառ կռիվը, ու նրանց պայքարը աշխարհի դեմ, իրենց աղոթքին հավատարիմ, շատ զավակներ ունենալն էր:

Արդարև, աշխարհագրական ամեն մի լայնություն այնքան մատչելի ու արագ հասանելի է հիմա (էլ չեն ասում՝ սոցցանցերը), որ հայրենիքը կարոտելու ժամանակները, կարծես, մնացել են անցյալում: Հիմա ազգ ու հայրենիք ապրեցնելու ժամանակներն են:

Ակնառու է, որ գլոբալիզացված աշխարհը դժվարությամբ է դիմադարձում կորոնավիրուսին, բայց նրա դեմ կանգնել են ազգային գիտակցությունն ու արժանապատվությունը. «Հողը հիշողություն ունի, որն իր տիրոջ խոսքի բույրն է» (Կարինե Խոդիկյան), որի լինելության գրավականը Միտքն է, Խոսքն է, Բառն է, որոնք էլ կյանքի շարժն ուղղորդող էներգիա-հոսքեր են:


ՄԱՐԴԻՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ...

ուղղված էր նաև Հով-
Սկիզբը՝ էջ 3 հանդես թումանյանի
հեղինակության դեմ: Մինչդեռ իրական-
նությունը ցույց է տալիս, որ խիստ չա-
փազանցված էին Ռոստոմի դեմ
մեղադրանքները: Հիշենք միայն մի
փաստ, թե ինչպես է Ռոստոմ թումանյա-
նը պատասխանում մեղադրանքներին:
Նա «Մշակ»-ում տպագրում է իրեն հաս-
ցեագրված մի նամակ և բացատրում, թե
ինչպես են գյուղացիները ոչնչացնում ան-
տառները: Ահա այդ նամակը. «Մեծ պ.
Ռոստոմ թումանյան. Ռոստոմ, Վահա-
նին (թումանյանի մյուս եղբորը - Ժ.Բ.) էլ
են ասել և ահա քեզ էլ գրում են, եթե հնար
ունեն Մարցայ կալուածքից մի կամ երկու
հարիւր ծառի իրաւունք տուր գերանով իր
վերջոկների, գանք կտրենք և դու էլ ա-
ռանձնապէս օգտվիր մի այլ տոկոսիւք
նախ ցկսելն գործի: Եղբայր, ինչի ես ան-
տարբեր մնում և այլն: Ընդունեցէք բարև:
Վարդան Տէր-Գրիգորեան» («Մշակ»,
1914 թ. 28): Այս նամակն իբրև փաստ բե-
րելով, որտեղ ըստ էության իրեն կաշառք
է առաջարկվում ապօրինի ծառահատու-
ների դիմաց՝ Ռոստոմ թումանյանը բողո-
քում է, որ լռեցիները գիշատչաբար
ոչնչացնում են անտառները: Ահա այս
Ռոստոմ թումանյանի վարքագիծն ունի
նաև «Տերը» վիպակի հերոս Ռոստոմը,
որն օրնիբուն հսկում է իրեն վատահված
անտառները, բռնում է անտառագողերին,
և դրա համար էլ նրան չեն սիրում գյուղա-
ցիները: Եվ եթե Ռոստոմ թումանյանին
սպանում են, ապա Մաթևոսյանի վիպա-
կան հերոս Ռոստոմին ազատում են աշ-
խատանքից և վերջում էլ ծեծում են,
նվաստացնում ու ծաղրում... Յավն այն է,
որ նման պատմությունները կրկնվում են
նաև մեր օրերում: Այդ համեմատության
հիմքը արդեն իսկ կա վիպակում և ուղիղ
տանում է դեպի Հովհաննես թումանյա-
նը: «...դուրս եկավ, որ ինչքան բարձր ու
բերքատու ես լինում, քարոզող շատանում
ու թշնամիդ էնքան չարանում է: Չնայած,
ասացիմք,- մեր յոթնամյա կրթությամբ
մենք էդքան համարձակություն չունենք
կարծիք տանելու, թե մենք ինքներս էլ
թումանյան ենք:

- Ընկեր թումանյան,- ասաց,- թու-
մանյան Ռոստոմ, ասաց...

Ասաց, զարմացավ ու ծիծաղեց. չէ՞
թումանյանը Ռոստոմ անառակ եղբայր է
ունեցել, ջահել հարսներին ծուռ աչքով է
նայել՝ սպանել են, անունը մեզանում ա-
նիծված է՝ օրհնված չի: Մենք ինքներըս
կարծում ենք այդպիսի թումանյան չի ե-
ղել, **ժողովուրդը հորինել է, որպեսզի Հով-
հաննես թումանյանի հայոց բարձր
հասակն ի վեր կողմնակիորեն քար գցի**
(ընդգծումը՝ Ժ. Բ. Անտիպետ, հ. 2, էջ
158): Ռոստոմի՝ Ժ. Բ. Անտիպետ, հ. 2, էջ
593): Անկախ թաքուն և հեռահար նպատակնե-
րից՝ դա ընդգծված հարգանք էր թուման-
յանի նկատմամբ, որն, ի դեպ,
արտահայտվում էր ոչ միայն թուրքերի,
հայ հյուրերի (որ ինքնին հասկանալի է),

այն սեփական եղբոր
կողմից: Թումանյանի
Ռոստոմ եղբայրը հայտ-
նի եղբոր նկատմամբ
նույնքան հարգալից է,
որքան օտարները, նույնիսկ ավելին՝ իր
խոնարհ վարքով ընդգծում էր եղբոր նշա-
նակալիությունը, նրա կարևորությունը:
«Թումանյանի Ռոստոմ եղբայրը փոքրի
(փոքրավորի), այլև տեղացու հարգանքով
իր սպիտակ մտույզը պոետի (գրքի մար-
դու) ու թիֆլիսեցու տակն էր քաշել, սպի-
տակ յափնջին եղբոր ուսերին գցել,
սպիտակ փափախը դրել ու պատվավոր
տեղը բազմեցրել, մի խոսքով՝ ինքը եղբո-
րից թուրքերեն յոթ անգամ թեկուզ ազատ
գիտեր, իր խոսքն ու շուքը եղբորն էր տվել,
ինքը պատվիրակության կարիքներին



եր...» (էջ 593): Այսպես Ռոստոմն ընդգ-
ծում էր, որ թեկուզ իր եղբայրը, բայց թուր-
քերի հյուրը հասարակ մահկանացու չէր,
ով իր հետ իմաստության ու խաղաղու-
թյան պատգամ էր բերում. «Եթե ուժեղ ենք
ու կռվում ենք՝ ուրեմն անխիղճ ենք, խիղճ՝
ինսաֆ չունենք, եթե թույլ ենք ու կռվա-
րար, ուրեմն հիմար ենք» (ն. տ.): Այս խոս-
քերը վիպասան Մաթևոսյանը չի հնարել,
դրանք լռեցիներին ուղղված թումանյա-
նի կոչի խոսքերն են: Ռոստոմ եղբոր ներ-
կայությունը Հովհաննես թումանյանի
խաղաղարար գործունեության մեջ ցույց
է տալիս Ռոստոմի դրական նկարագիրը
թեկուզ միայն հայ-թուրքական հարաբե-
րությունների կարգավորման հարցում:
Այստեղ պետք է համաձայնվել Համո
Մաթևոսյանի հետ, որն ասում է. «Հով-
հաննես թումանյան, իրական ու ժո-
ղովրդի սիրուց ծնված թումանյան, թե
մեն-մենակ, սպիտակ դրոշմ ձեռքին, թուր-
քին ու հային խաղաղեցրեց: Ո՛չ, իհարկե,
մենակ չէր. Ռոստոմ անպակաս իր ձեռքով
խմբով հարգալի հեռովից ապահովում էր
եղբոր բանագնացությունը, իր ծալած
յափնջին եղբոր տակ, եղբայրը մեր սարե-
րում իր ուրբը պնդած ու իրեն տեր կար-
գած թուրքի գեներալ-թեկ Ղափըջօղլու
դոնախլըղին (հյուրընկալությանը),- թու-
մանյան պիտի լինել՝ և՛ թուրքի հետ հացի
նստել, և՛ սաստել թուրքին...» (Անտիպետ,
հ.2, էջ 61):

Իհարկե, թումանյանի բարձր հեղի-
նակությունը նաև թուրքերի մեջ և նրա
խաղաղարար գործունեությունը չեն
խանգարել թուրքերին, որ նրանք բանա-
ստեղծի՝ սար գնացող «մոր ճանապարհը
կտրեն ու խորջինները հացի նայեն» (Ան-
տիպետ, հ.2, էջ 503): Եվ, ընդհանրապես,
ինչպես Մաթևոսյանն է գրում՝ «Թուման-
յանի ժպիտն ու խաղաղ հարևան մնալու
իշխանական պատվիրանը մինչև 1918-ի
ամառն է դիմացել: Թումանյանի պատվի-
րանն այս է. «Մինչև Ղազախ ու Ադստև,

մինչև Ղարաբաղ ու Թավրիզ որտեղ որ
հանած սուր ու լցված հրացան կա՝ մինչև
էնտեղ գնում են ու պտտվեն գամ. գամ
տեսնեն ինչքան պսակի հասած ժողո-
վուրդ ունեք՝ հարսանքի եք հանել, Քոշա-
քար մի մեծ հարսանք է»» (ն. տ., էջ 498):

Հ. Մաթևոսյանի խոսքի մեջ ակնարկ
կա սակայն, որ հետագայում ոմանք թու-
մանյանի նկատմամբ վատ վարվեցին
թուրքի անունից: «Տախը» վիպակի կեր-
պարներից մեկը, որ թուրքերի մեջ ազատ
երևույթ ունեք, այսպես է մտածում ինքն
իր մեջ. «...թուրքերի ճամփան իսկապես
միայն իր առջև է բաց, ինչը որ նույնիսկ
Հովհաննես թումանյանի նման մարդուն
չէր տրված. և եղբորն ահա սպանեցին ու
ետևից քրեցին և թուրքի անունից մոր
ճամփան նույնպես կտրեցին ու ան-
հանգստացրին...» (ն. տ., 526): Հարցը
մութ է մնում՝ ինչո՞ւ թուրքի անունից...


Թումանյանի հետագա կյանքի վերա-
բերյալ հիշատակություններն արդեն
մխիթարական չեն, նրանց մեջ ափսո-
սանք ու ցավ կա: Այն հարցին, թե «Հով-
հաննես թումանյանն ապրե՞ց եղեռնի
մեջ», հետևում է պատասխանը. «Ապ-
րեց/Որդի կորցրեց, եղբայր կորցրեց: Իր
աչքերի առաջ փլվեց մեծ հայրենիքի իր
հույսը, իր ժողովուրդը ջնջվեց, և հանգի
պատճառով Հովհաննես թումանյանը
չկարողացավ եղեռնից սարսափի մի
նշույլ տեղավորել իր բանաստեղծության
մեջ» (Անտիպետ, հ.1, էջ 207): «Հաղար-
ծին» վիպակի արվեստագետ հերոսների
գրույցը շարունակվում է «Հոգեհանգիստ»
բանաստեղծության տողերի և «մարդա-
կեր գազան» մարդու՝ թումանյանական
բնորոշման շուրջ: Մի ուրիշ երկում («Թա-
փանցիկ օր») արդեն գործ ունենք թու-
մանյանի վրա եղեռնի ազդեցության հետ՝
«Եվ մի տարում հարյուր տարով ծերա-
ցած այդ թումանյանը» (Երկեր 1, 346):

Թումանյանի հետագա գործունեու-
թյան անդրադարձները ավելի սակավ են և
վերաբերում են բանաստեղծի կյանքի
վերջին տարիներին, հատկապես ՀՕԿ-ի
նախագահության շրջանին: Հետաքրք-
րականն այն է, որ ժողովուրդը ՀՕԿ-ի
գործունեությունը գնահատում է թուման-
յանի հեղինակավոր ներկայության փաս-
տով, այսինքն՝ բանաստեղծն է իմաստ
տալիս կազմակերպությանը և ոչ հակա-
ռակը: «Մերմնացուն և նավթը մեր էս
գյուղի ժողովրդին ՀՕԿ-ն էր տվել՝ Հա-
յաստանի օգուտն էր և կոմիտեն: Իսկ
ժողովուրդն ասում էր՝ բանաստեղծ Հով-
հաննես թումանյանը սերմնացու է ու-
ղարկել, չէր ասում ՀՕԿ-ի նախագահ
թումանյանը մեզ համար սերմնացու է ու-
ղարկել, ասում էր բանաստեղծ թուման-
յանը մեզ համար սերմնացու է ուղարկել»
(Անտիպետ, հ. 1, էջ 354):

Հ. Թումանյանի կերպարը Մաթևոսյա-
նի երկերում ուրվագծվում է հատվածա-
բար՝ սկսած հայրենի բնաշխարհում նրան
այս կամ այն կերպ հիշեցնող, նրա հետ
կապված վայրերից մինչև ՀՕԿ-ի նախա-
գահ: Հատվածաբար ներկայացնելը
պայմանավորված է նրանով, որ ոչ թե հե-
ղինակն է իր կողմից կերպար կերտում,
թեև, բնականաբար, ամենուրեք հեղինակի
անտես ձեռքն է գործում, այլ ժողովուրդը՝
ինքնաբերաբար, ըստ պատեհ առիթի, հի-
շում է նրան, երբ տեղանքն է հիշեցնում,
երբ բանաստեղծի այս կամ այն գործու-
նեությունը, ստեղծագործությունն է հիշո-
ղությունը արթնացնում կամ իրական
կյանքի այս կամ այն երևույթն է հիշեցնում
թումանյանի այս կամ այն գործը: Եվ եթե
Հրանտ Մաթևոսյանի երկերում թուման-
յանն ապրում է ժողովրդի մեջ, ապա՝
Մաթևոսյանի ստեղծագործական վարպե-
տության շնորհիվ, որովհետև նա է «նշխար
առ նշխար հյուսել» Մեծ լռեցու անմահ
կերպարը՝ այդ նպատակով առաջնաբեր
բերելով ժողովրդին:

ԳԹ - Պարսկերենից Չեր քարգնամությունների շնորհիվ հայ ընթերցողը որոշակիորեն ծանոթ է իրանական ժամանակակից պոեզիային: Ի՞նչն է այդ պոեզիայի առանձնահատկությունը և ինչն է հայերիս այն հետաքրքիր:

Էդուարդ Հախվերդյան - Եթե վերադարձնեի չինչի, պիտի ասեմ. տարիների հետ քարգնամությունը ինձ համար դարձավ մի տեսակ առաքելություն ու մաս երախտիքի խոսք ու վարձք Իրանի ժողովրդին ու մշակույթին: Ասում եմ՝ առաքելություն, որովհետև երբ 1970 թ. հայրենադարձվեցի, նկատեցի, որ Հայաստանում համարյա իրականված չեն իրանական ժամանակակից գրականությանն ու արվեստին, և իհարկե, շատ հարգելի պատճառով: Իրանը քաղաքական և կապիտալիստական երկիր էր, իսկ Հայաստանը գտնվում է Խորհրդային Միության կազմի մեջ: Իրանի ժամանակակից գրականությունը, հատկապես Հայաստանում, դարձավ իմ տարերքը: Լինելով բանաստեղծ՝ մեծ ցանկություն ունեի իրանական գրականության հանդեպ իմ վայելքը կիսել հայաստանյան ընկերներիս հետ՝ իմ մեջ թաքցնելով այն հեռահար երազանքը, որ սեփական ջանքերի շնորհիվ կկարողանամ լուրջ արդյունքների հասնել թե՛ որպես բանաստեղծ և թե՛ որպես քարգնամիչ: Չեմ ցանկանում խոսել այն տարիների «չինական պարսպի» մասին, որ առկա էր իմ նմանների համար և առհասարակ (անկախ քարգնամության որակից), երբ շատ խմբագիրներ պատասխանատվությունից խուսափելու համար (չընդունելով ու չընթերցելով քարգնամությունը) պահանջում էին իրանցի հեղինակների ռուսերեն քարգնամությունը և երբեմն էլ խոստովանում, որ եթե ռուսերենը չկա, չեն կարող տպագրել... Այդուհանդերձ, քսան տարի համարյա ոչ մի տող չտպագրվելով՝ իմ բոլոր տարիները հագեցած են եղել քարգնամական բուռն ստեղծագործությամբ և անհասանելի պայքարով ու հավատքով: 1990 թ. եղավ իմ գրական կյանքի շրջադարձային փուլը, կարծես անկախությունը ձեռք էիմք բերել հենց նրա համար, որ տպագրվեմ: Ես ցնծության մեջ էի, դա վեր էր բոլոր տեսակի երկնային ու երկրային պարզանքներից: Բայց պիտի խոստովանեմ, որ բնույթով (կարծում եմ) լավատես լինելով՝ երբեք ու երբեք սպակոթի քիկնոց չեմ կրել և հնարավորինս, հենց այդ բռնապետության տարիներին, ապրել ու ստեղծագործել եմ լիաթոք՝ շրջապատված իմ հայաստանցի հրաշալի ընկերների հոգատարությամբ ու ընկերակցությամբ: Հիշում եմ, երբ լուսահոգի Լևոն Անանյանը զանգեց ու ասաց՝ ինչքան քարգնամություն ունես, վերցրու, արի խմբագրություն: Իսկ իմ գրոցները լցված էին քարգնամություններով... Ես կարողացա իրանական ժամանակակից գրականության բոլոր ժանրերն ու ճյուղերը մասամբ ներկայացնել հայ ընթերցողներին: Իրանական ժամանակակից արձակը, դրամատուրգիան, հեքիաթը և առավելապես պոեզիան: Կարծես մի փոքր շեղվեցի, բայց չէի կարող չանդրադառնալ այդ ժամանակահատվածին:



1949 թ. Իրանի գրողների համաժողովում բանաստեղծ Նիմա Յուշիջը իր «Երկու մամակ» վերտառությանը հողվածաշարով մախանչեց և հանգամանորեն շարադրեց Իրանի նորագույն պոեզիայի իր հիմնադրույթներն ու տեսակետները. «Մեր պոեզիան,- գրում է Ն. Յուշիջը,- պիտի արտահայտի ոչ միայն քնարական տրամադրություններ, այլև բացահայտի սոցիալական պրոբլեմների էությունը»: Նա իր հիմնադրույթներով փորձում էր վերանայել բանաստեղծների ստեղծագործական հնարավորությունները կաշկանդող կանոնները. «Չևը, բառերը, չափն ու հանգը ինձ համար միշտ այն արտահայտչամիջոցներն են եղել, որոնք, ըստ անհրաժեշտության, փոփոխել են, որպեսզի իմ և ուրիշների հույզերը ավելի ճշմարտացի արտահայտեն»: Ն. Յուշիջը, գերազանցապես տիրապետելով Իրանի դասական պոեզիայի տաղաչափություններին, գրում է. «Ինձ համար ազատ հանգ ու վանկով ստեղծագործելը ավելի բարդ է»:

Հիրավի, փայլուն ավանդույթ ստեղծած պարսից դասական պոեզիան մաս և առաջ մեծ խնդիրների ու դժվարությունների առաջ կանգնեցրեց հենց Իրանի նորագույն պոեզիայի ստեղծման ջատագովներին: «Մեր այսօրվա պոեզիան, որին «Նոր բանաստեղծություն» ենք անվանում, թեև ցուցադրաբար ոչ մի ջանք ու եռանդ չենք խնայում նրան հավատարիմ մնալու համար, սակայն ցավոք, հեռու է իրական կյանքից՝ ժամանակի ու տեղի առանձնահատկություններից,- ասում է բանաստեղծուհի Ֆորուզ Ֆարրուխզադը,- անշուշտ, դա էլ իր պատճառներն ունի, նախ հենց այն առեղի լեռը, որը, որպես դասական գրականություն, գոյություն ունի մեր առջև, և մենք նրա ծանրությունը շարունակ գգում ենք մեր ուսերին...»: Եվ

այդուհանդերձ, Նիմայից հետո տասնյակ տաղանդավոր բանաստեղծներ՝ Ահմադ Շամլուն, Սոհրաբ Սեփեհրին, Ֆորուզ Ֆարրուխզադը, Նուրաթ Ռահմանին, Նադեր Նադերփուրը, Ֆերեյդուն Մոշիրին, իսկ ավելի ուշ Ռասուլ Յունանը, Փունե Նեղային, Մ. Ռ. Աբդուլմալեքյանը, Վահե Արմենը և շատ ու շատ ուրիշներ, տաղաչափության ու ոճային տարաբնույթ դրսևորումներով ստեղծեցին և շարունակում են ստեղծել Իրանի նորագույն պոեզիայի փայլուն մնուշներ:

Շեշտադրված ասելու և հիմնավորելու համար, թե ինչն է իրանական ժամանակակից պոեզիայի առանձնահատկությունը, թերևս պահանջվում է խորամուխ լինել շատ նրբությունների մեջ, քանզի այսօր (ինչպես ընդունված է ասել) մոլորակը շատ է փոքրացել, և արվեստի ու մշակութային փոխադարձ դրսևորումները պտտվում են նույն ցավերի, ուրախությունների առանցքում, և ընդունելի, ընկալելի լինելով հանդերձ՝ կրում է համամարդկային համընդհանուր դրոշմը: Նորագույն պոեզիայում, հատկապես իրանականը, այլևս առկա չէ արևելյան տաղաչափությունը, ոճային


ԳԹ - Դուք մաս գեղանկարիչ եք: Օրգանական կապ կա՞ Ձեր պոեզիայի և նկարչության միջև:

Է. Հ. - Որքան ինձ հիշում եմ, վաղ մանկությունից, գուրազեռաբար սիրել և տարված եմ եղել գրականությանը և գեղանկարչությանը: Ես դժվար ստեղծագործող եմ: Իմ բոլոր ստեղծագործությունները պոետական պատկերներով ու երանգներով վավերագրություններ են, և գեղանկարչության փոխադարձ օրգանական կապը ինձ համար այն է, որ տեսնում եմ բանաստեղծությունը ինչպես գեղանկար, իսկ նկարելիս տեսնում եմ բառերի ներդաշնակությունը և պոեզիան: Գույնը բառ է դառնում, բառը՝ գույն, իսկ երաժշտությունը, որը ոչ պակաս ազդեցություն ունի իմ կյանքում, ստեղծագործելու պահին, թերևս ինձ համար, դառնում է ամենահզոր խթանիչ ուժը:

ԳԹ - Գտնո՞ւմ եք, որ գրականությունը կարող է հասարակության քաղաքակրթության աստիճանի ցուցիչ լինել:

Է. Հ. - Հարցը, կարծում եմ, շատ ավելի խոր վերլուծության կարիք ունի: Այս առումով չեմ ցանկանում գրականության և, առհասարակ, արվեստի ու մշակույթի դերը

ԳՈՒՅՆԸ ԲԱՌ, ԲԱՌԸ՝ ԳՈՒՅՆ



բարդ ու հմայիչ համակարգը, սիրային անգուզական լիրիկան, կյանքի ու մահվան, միստիկական ու փիլիսոփայական տարատեսակ դրսևորումներն ու բարոյադաստիարակչական բազմախորհուրդ հումանիզմը: Ժամանակակից պոեզիայի լեզուն պարզ է, պոետական հրաշալի պատկերներով, ընդլզվումներով և իրերին ու երևույթներին նայելու, տեսնելու բոլորովին նոր դիտարկումներով: Այդ նորագույն դիտարկումը ցայտուն կերպով երևում է Սոհրաբ Սեփեհրի պոեզիայում, որը իրավամբ ոչ միայն առանձնահատուկ է իրանական պոեզիային, այլև համաշխարհային գրականությանը: Բավական է հիշել «Ջրի ոռոմածայնը», «Կամաչ ծավալ», «Մենք ոչինչ, մենք հայացք» և այլ ժողովածուները:

Երբ 1996 թ. Ֆորուզ Ֆարրուխզադի «Մի այլ ծնունդ» բանաստեղծությունների ժողովածուն, որն ընդգրկում է վաղամեռիկ բանաստեղծուհու վերջին երկու ժողովածուն, հայերենով լույս տեսավ Լոս Անջելեսում, իսկ այնուհետ հասու եղավ մաս հայաստանյան ընթերցողներին, ընդունվեց մեծ ոգևորությամբ: Կարծում եմ, հայ ընթերցողին և հատկապես կին բանաստեղծների համար նա ընծայաբերեց արևելքի կնոջ ընդլզումը, ազատության անհագուրդ տենչի բավարարումը արվեստի սխրագործությամբ, անարդարությունների դեմ անհասանելի պայքարը, իր պոետական պատկերների հմայքը... Կարծում եմ, տեղին է այստեղ մեջ բերել բանաստեղծ Խաչիկ Մանուկյանի խոսքը Ֆ. Ֆարրուխզադի մասին. «Կան բանաստեղծներ, որոնց ստեղծագործությանը հաղորդակցվելուց հետո այլևս անհնար է դառնում ապրել իրենց հոգևոր աշխարհի սահմաններից հեռու: Դրանք գորավոր, երազային մեծ թռիչքներով հագեցած հոգիներ են, որոնց տեսածի, ապրածի ու զգացածի կարտոն բոլորն ունեն: Իրենց կերտած անկյուրեղեն տաճարներում է պահվում ամենաթանկ գանձն աշխարհի, որը ոչ փառատենչ արքաները, ոչ մարդուրաց ավազակները հափշտակել չեն կարող. դրանք ծավալվում են մոլորակով մեկ և իրենց մեջ անթեղված աստվածավառ սերն են բաշխելու Մարդկությանը: Այդ երևելիներից է պարսկուհի բանաստեղծ Ֆ. Ֆարրուխզադը, որը մեծերին վայել անմիջականությամբ ու պարզությամբ ներկայանալով՝ ջերմ մտերմություն է ունենալու ամենքիս հետ»:

Պետք է շնորհակալ, որ գրականությունը, ի վերջո, կենսական էներգիայի անսպառ աղբյուր է, և որքան այդ էներգիայի աղբյուրները շատ ու բազմազան են, այնքան կենսունակ, հաստատուն և հարուստ է այդ երկրի գրականությունը: Թարգմանական արվեստը այդ էներգիայի կարևորագույն աղբյուրներից է, անկախ այն բանից, թե որ երկրի ու ազգի գրականությունն էս դարձնում քո ազգային հարստությունն ու գանձը:

Ես մեծ պատասխանատվությամբ աշխատել եմ իրանական ժամանակակից գրականությունը անվմաս կերպով ներմուծել Հայաստան ու դարձնել մեր գրականության ու մշակույթի սեփականությունը:

նսեմացնել, բայց մարդկության պատմությունը, ինչպես մաս մեր կյանքի փորձառությունն ու երևույթներին ու իրադարձություններին ակամատես լինելը մեզ (կամ այս դեպքում ինձ) այլ բան է մատնացույց անում: Արդյո՞ք բոլոր առումներով զարգացած Գերմանիան ունի գրականության ազդեցության պակաս, երբ ճնեց, փայփայեց ու մոլեռանդորեն հետևեց ֆաշիզմին, կամ Ռուսաստանը՝ բոլշևիզմին: Քաղաքական և սոցիալ-տնտեսական խնդիրները նույնպես պակաս գործոններ չէին, բայց երբ անհատը և հասարակությունը թվացյալ բարձր քաղաքակրթական աստիճանից միանգամից գահավիժում են և երևակայությունից դուրս անմախաղեղ ոճրագործություններ են կատարում, ինձ այլ բան է ասպացուցում, որ գրականությունը, իր անուրանալի հզոր առաքելությունով հանդերձ, ի գորտ չէ դառնալու հասարակության քաղաքակրթության աստիճանի ցուցիչ: Բարեկիրք գրողը, գիտնականը, մտավորականը հացի հերթում մի ակնթարթում կարող է վերածվել ոճրագործի, իսկ նույն հացի հերթում կանգնած կրթություն չունեցող և աշխարհի գրականությունից անտեղյակ մարդը կարող է անձնագոհ և մարդկային վեհ արարք դրսևորել: Նույնն է մաս ռազմադաշտում և գերության մեջ հայտնված անհատը: Անշուշտ, գրականությունն ու արվեստը մեծ դերակատարություն ունեն մարդու դաստիարակչական գործում, բայց անհատը և հասարակությունը շատ արագ կարող են վերածնվել՝ անկախ գրականության առկայություն: Հիշենք ոչ հեռու անցյալում Ամերիկայի զինվորների ոճրագործությունները Վիետնամում և Իրաքում: Ճապոնացիների ոճրագործությունները Չինաստանում... Սա թերևս զարգացած մի քանի երկրների օրինակն է, բայց ասածս բնավ չի վերաբերում գրականության և առհասարակ արվեստի ու մշակույթի՝ ի սկզբանե հատկացված առաքելությանը: Մի առիթով գրել էի. «Կյանքը ամենամեծ և ամենահրաշալի անհեթեթությունն է... Արվեստը փորձում է գեղեցկություն և միտք հաղորդել այս առեղծվածային անհեթեթությանը»: Կարճ ասած՝ ոչ (ինձ համար՝ ոչ), գրականությունը չի կարող քաղաքակրթության աստիճանի ցուցիչ լինել, եթե անգամ այդ հասարակությունը ունի համաշխարհային չափանիշներով հզոր և հանճարեղ գրողներ ու գրականություն:



ԱՆՆԱ ԱԽՄԱՏՈՎԱ

Անձիր է ոսկե լույսն իրիկնային, Ապրիլյան գովը՝ քնքուշ ու խաղաղ: Ուշացել ես դու ձիգ տարիներով, Բայց, այնուհանդերձ, գոհ եմ, որ եկար:

Նստի՛ր իմ կողքին, մոտիկ ավելի, Նայիր մտերիմ, ուրախ աչքերով: Ահա կապտավուն այս տետրակը՝ լի Մանկական իմ պարզ թոթովանքներով:

Ների՛ր, որ կյանքս մատնել եմ վշտին Ու արեգակով շատ քիչ եմ արբել: Ների՛ր ինձ, ների՛ր, որ կյանքիս ճամփին Ես շատերին եմ քո տեղը դրել:

Մառնամանիքից ու քամուց հետո Ջեռ կրակի մոտ հաճելի էր շատ. Միրոս աչքաթող արի ես այնտեղ, Ու այն գողացան ինձնից աննկատ:

Չգվում է շռայլ տոնն ամանորյա, Թաց են նոր տարվա շքեղ վարդերը: Իսկ կրծքիս ներքո հիմա էլ չկան Ճպուռի ծանոթ այն թրթիռները:

Ախ, հեշ դժվար չէ գուշակել գողին, Իսկույն մատնում են աչքերը նրա: Լոկ դողում եմ, որ ուր որ է շուտով, Իր ավարը հենց ինքը ետ կտա:

Կմոռանա՞նք ինձ - ա՛յ թե զարմացրին, Ինձ մոռացել են մի հարյուր անգամ. Հարյուր անգամ ես իջել եմ շիրիմ Ու գուցե նաև հիմա ես չկամ:

Իսկ մուսան իմ՝ խուլ, կուրացած, անձայն, Ինչպես հատիկը, փտել է հողում, Որ ելնի մոխրից փյունիկի նման Ու հանց աղավճի հառնի եթերում:

Մտերմության մեջ մարդկանց սահմանագիծ կա թաքուն, Որ հասու չէ երբևէ ո՛չ կրքերին, ո՛չ սիրուն, Թող որ շուրթերն են ձուլվում լռության մեջ մի կիզում, Ու սրտերը խենթացած՝ պատառոտվում ու պոռթկում:

Ընկերությունն է անգամ անուժ այստեղ ու անգոր, Նաև՝ վսեմ, երջանիկ տարիները այն վառման, Երբ անկաշկանդ է հոգին, դեռ օտար ու անսովոր՝ Դանդաղ տանջող հեշտանքին, թակարդներին ցուփոթյան:

Ցնորյալներ են նրանք, ովքեր դրան են ձգտում, Ովքեր հասել են արդեն՝ լի թախծությամբ մի անափ... Հիմա քեզ պա՞րզ է արդեն, թե ինչու չի տրոփում, Չի բարախում խենթորեն սիրոս էլ քո ձեռքի տակ:

Օ՛, սիրո հուշեր, ծանր եք ինձ համար. Իմ բախտն է՝ երգել, կիզվել ձեր ծխում, Իսկ այլոց համար՝ դուք բոց մի խաղաղ, Որը լոկ մրսած սրտեր է բուժում:

Որ կուշտ տաքացնեն մարմիններն իրենց, Իմ արցունքներն են նրանց հարկավոր... Հանուն դրա՞ եմ ես երգել, Տե՛ր իմ, Հանուն դրա՞ եմ ապրել լոկ սիրով:

Տո՛ւր ինձ այնպիսի մի թույն, որ խմեմ, Ու կապվի լեզուս, համրանամ մեկեն, Անփառունակ իմ այս փառքը դժխեմ Լվա մոռացմամբ դու մի լուսեղեն:

ՍԵՐ

Մերք օձի պես կծկվելով՝ Կախարդում է սիրտդ կարծես, Մերք պատուհանից օրերով Դունդունում է աղավճու պես:

Մերք շողում է եղյամի մեջ՝ Չքնաղ պսակ մի ծաղկավառ... Բայց և թաքուն ու մշտաբուն՝ Քեզնից խլում քուն ու դադար:

Քաղցր է լսել լացը նրա Չուրբակի մեղմ աղոթքի մեջ... Օ՛, փորձա՛նք է գտնել նրան Դեռ անծանոթ ժպիտի մեջ:

Արքայա՛զն իմ, չէ, ես նա՛ չեմ, Ում տենչում ես, իմ մեջ փնտրում, Շուրթերը իմ վաղուց արդեն Գուշակում, էլ չեմ համբուրում:

Մի՛ կարծիր, թե տենդի մուժում Կամ տրտմության մեջ մի լռին, Դժբախտությունն եմ ես գուժում. Դա ընդամենն արհեստն է իմ:

Ես կարող եմ սովորեցնել՝ Ոնց երազը կոչել կյանքի,

Ինչպես ընդմիշտ ընտելացնել՝ Ինչ սիրվել է թեթևակի: Փա՞ռք ես ուզում՝ ինձնից վստահ Խորհուրդ հարցրու, չե՛ս փոշմանի: Բայց, հավատա, ծուղակ է դա, Ուր խի՞նդ ու լույս քեզ չե՛ն գտնի:

Դե, իսկ հիմա դու տուն գնա, Այն, ինչ եղավ, տո՛ւր մոռացման, Մեղքիդ համար, հանգի՛ստ, Տիրոջն Ինքս կտամ մի պատասխան:

Թե՛ արտ եմ տեսել ես կարկտահար, Թե՛ հոտ ու նախիր՝ բռնված ժանտախտով, Խաղողի ողկույզ ու վազ ցրտահար՝ Սառնամանիքի ավերից հետո:

Հիշում եմ նաև, տեսիլքի նման, Ես տափաստանի հրդեհն ահարկու... Մարսափելի է ինձ համար, սակայն, Ամայացումը տանջված քո հոգու:

Աղքատներ շատ կան: Նաև դո՛ւ եղիր, Ցամաք, անարցունք քո աչքերը բա՛ց, Պաղ կացարանն իմ լույսով կեղի Աղոտ, անկենդան փիրուզը նրանց:

Թաղի՛ր, դո՛ւ թաղիր ինձ, քամի՛, Հարազատները իմ չեկան, Ինձ վրա մեղմ շունչն է հողի Ու երեկոն թափառական:

Քեզ պես ես էլ ազատ էի, Բայց երևի թե չափն անցա, Ահա անշունչ ու պաղ իմ դին. Նայիր՝ կողքիս ոչ ոք չկա:

Ծածկիր դու սև իմ վերքն այս մութ՝ Շղարշով լուռ, մեղմ իրիկվա, Հրաման տուր՝ մուժն այս կապույտ Նոր սաղմոսներ վրաս կարդա:

Որպեսզի ես թեթև ու հեշտ Հանձնվեմ իմ քնին վերջին,- Սեզերի հետ դու աղմկի՛ր Գարնան, խե՛նք իմ գարնան մասին:

Քսանմեկն է: Գիշեր: Օրը՝ երկուշաբթի: Քաղաքի գծերը ջնջվել են մուժում: Ո՞ր անբանն էր՝ մի օր իրենից հորինեց, Թե աշխարհում նաև սեր է լինում:

Ու ճանճրությանց գուցե և կամ ծուլությունից Ամենքն հավատացին ու ապրում են այդպես. Հանդիպումներ տենչում, դողում բաժանումից Եվ սիրային երգեր երգում կարոտակեզ:

Բացվում է գաղտնիքը, սակայն, ոմանց համար, Ու պաղ լռություն է իջնում նրանց վրա... Մի օր դա հասկացա ես շատ պատահաբար Եվ հիվանդ եմ կարծես մինչև հիմա:

Դու կարծում էիր, թե ես էլ նա եմ, Ում կարող են հեշտ մոռացության տալ. Որ լաց-աղերսով ես կթափառեմ Աշխետ նժույզի սմբակների տակ:

Կամ հեքիմներից կսկսեմ խնդրել Արմտիքներ ու ջուր հմայական, Որ քեզ ուղարկեն ահարկու նվեր՝ Անուշ թաշկինակն իմ նվիրական:

Ռուսերենից թարգմանեց Լևոն ԲԼԲՈՒԼՅԱՆԸ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ» ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԻՆ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում արտակարգ դրությամբ պայմանավորված՝ «Գրական թերթը» առժամանակ լույս կտեսնի առցանց տարբերակով:

Գրական Թերթ. Գլխավոր խմբագիր՝ Կարինե ԽՈՂԻՎՅԱՆ. ԽՄԹԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ. Նորայր Արայան, Լիլիթ Արզումանյան, Պետրոս Դեմիրճյան, Անիտա Դոլոխանյան, Ազատ Եղիազարյան, Գուրգեն Խանջյան, Մամվել Կոստյան, Էդվարդ Միլիտոնյան, Հրաչյա Մարիթեկյան. Հրատարակում է «ՀԳՄ»-ՀԿ «Գրական թերթ» խմբագրությունը՝ ՍՊԸ- ն: «Կայական» 02Ա 051126: Գրանցման թիվ՝ 1175: Ծավալ՝ տպ. 2 մամուլ: Տպագրման 1000: Գինը՝ 100 դրամ: Լույս է տեսնում յուրաքանչյուր ուրբաթ: Նյութերն ընդունվում են համակարգչային շարվածքով, չեն գրախոսվում և չեն վերադարձվում: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների արտահայտած տեսակետներին: Արտատպության ղեկավարումը կատարում է «Գրական թերթին» պարտադիր է: Թերթը տպագրվում է պետական մասնակի աջակցությամբ: Տպագրությունն իրականացրել է «Լևոն ԲԼԲՅԱՆ» ՍՊԸ- ն՝ ՀԳՄ «Լ. Զ. ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ» տպագրատանը: 0019 Երևան 19, Մարշալ Բաղրամյան պող. 3 էլ. փոստ՝ grakan-tert@yandex.ru, grakantert@gmail.com